Ազգ

Azg
armenian daily

Օգոստոս
7
Շաբաթ
1993

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԱՖՈՐԵՍՏԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՀՍՍՀ-Ադրբեջանի, թիվ 350 (401)
Գինը 10 ռ.
Ինդեքս 69149
Երևան 375010
Հանրապետության 47
հեռ. 581841, ֆաքս 562941
տելեքս 243266 CPIRI SU

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ Մ. Մաշտոցի անվան ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

Մոնիտոր

Ով համաձայն չի, թող նոր գործ փնտրի

Երեկ Ռուսաստանի կառավարության ընդլայնված նիստի մասնակիցները հավանություն տվեցին Նախարարների խորհրդի հաստատությանը եւ որոշեցին հիմք ընդունեցին 1993-95 թթ. տնտեսական բարեփոխումների եւ տնտեսության կայունացման ծրագրի նախագիծը: Ամփոփելով կրեմլում խորհրդակցության արդյունքները, վարչապետ Չեռնոմիրդինը հայտարարեց, որ կառավարությունը չի հրաժարվի որդեգրած քաղաքականությունից: Նա նաեւ հայտնեց, որ հինգ շաբթի նախագծուշացրել է կառավարության անդամներին, եթե նրանցից որեւէ մեկը խոսի կառավարության անունից, բայց հակառակի կառավարության քաղաքականությանը, թող նոր գործ փնտրի: Միաժամանակ ՌԴ խորհրդարանը երեկ որոշում ընդունեց կասեցնել «Սեփականաշնորհման գործընթացին քաղաքացիների մասնակցությունն ապահովելու լրացուցիչ միջոցառումների մասին» Բորիս Ելցինի հրամանագիրը, մինչեւ Սահմանադրական դատարանը որոշի՝ համաձայնասխանում է այն Սահմանադրությանը, թե ոչ: ԻՖ

Ընդդիմություն

Սահմանադրության խորհրդի հերթական նիստը

Օգոստոսի 6-ին Հայաստանի «Սահմանադրական իրավունք» միության կենտրոնական գրասենյակում կայացավ քաղաքացիական համաձայնության Սահմանադրության խորհրդի հերթական նիստը, որը վարում էր ՍԻՄ-ի նախագահ Հրանտ Խաչատրյանը:

Այս նիստում խորհուրդը վերջնական ձեւակերպումներ տվեց մի շարք հիմնադրույթների, որոնց հստակեցման վերաբերյալ նախորդ հանձնարարականներ էին տրվել աշխատանքային խմբին:

Անդրադառնալով միասնական նախագծում ՀՀ նախագահի կարգավիճակի հարցին, խորհուրդը համաձայնության եկավ, որ հանրապետության առաջին նախագահը չպետք է ունենա առաջնային մանդատ եւ չպետք է ընտրվի միայն խորհրդարանի կողմից: Ճշտվեցին նաեւ դատական իշխանություններին եւ տեղական ինքնակառավարմանը վերաբերող սկզբունքները:

Հատուկ քննարկման առարկա դարձավ ՀՀ կառավարության նախագահության հայտնի որոշումը, որով գործադիր իշխանության մարմիններին հանձնարարվում է կազմակերպել Սահմանադրության նախագծի քննարկումներ: Ելույթներում այդ նախաձեռնությունը գնահատվեց որպես ՀՀ գերագույն խորհրդի նախագահության որոշմամբ հատուկ այդ նպատակով ստեղծված բազմակուսակցական հանձնաժողովի իրավասությունների բացահայտ յուրացում եւ կոմունիստական վարչախմբի արատավոր ավանդույթների շարունակում: Միանշանակ կարծիք հայտնվեց, որ այդ ճանապարհով փորձ է կատարվում օգտագործել գործադիր իշխանության լծակները սահմանադրական հանձնաժողովի ներկայացրած նախագծի շուրջ առաջնայնության պատրանք ստեղծելու եւ այն ժողովրդին պարտադրելու համար: Ելնելով դրանից, քաղաքական համաձայնության Սահմանադրության խորհրդի ՀԴԿ, ՀՀԿ, ՀՅԴ, ՀՌԱԿ եւ ՍԻՄ կուսակցությունները՝ Հեռնամուխ լինելով ՀՀ Սահմանադրության նախագծի միասնական տարբերակի ստեղծմանը, միաժամանակ նպատակահարմար գտան, որպեսզի նրանցից յուրաքանչյուրը ՀՀ սահմանադրության նախագծի իր տարբերակը օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացնի ՀՀ Գերագույն խորհուրդ:

Դրանով նպատակ է հետապնդվում հանրապետության լայն հասարակությանը մասնակից դարձնել միասնական նախագծի հիմքում դրված տարբերակների քննարկմանը, ինչը կնպաստի վերջինիս ճշգրտմանը եւ այդ գործում շահագրգռված կազմակերպությունների, մասնագետների եւ ժողովրդական լայն զանգվածների ընդգրկմանը:

Սահմանադրության խորհուրդը հույս է հայտնում, որ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացված ՀՀ սահմանադրության նախագծերի բոլոր տարբերակները սահմանված կարգով կհրապարակվեն պատշաճական ժամանակում եւ համաժողովրդական քննարկման ընթացքում կարժանանան հավասար ուշադրության:

Քննարկվեցին նաեւ կազմակերպչական բնույթի հարցեր:

Սահմանադրության խորհրդի հաջորդ նիստը տեղի կունենա օգոստոսի 10-ին: Հայաստանի Դեմոկրատական կուսակցության գրասենյակում:

Կարգավորում

ԵՐԵՔ ԿՈՂՄԵՐԸ ԿՀԱՆԴԻՊԵՆ ՀՌՈՄՈՒՄ ԵՐԿՈՒՇԱԲԹԻ

«Հանրապետության նախագահը բազմիցս նշել է, որ մենք կողջունենք ցանկացած համաձայնեցված փաստաթուղթ, որը կընդունեն Ադրբեջանի եւ Լեռնային Ղարաբաղի իշխանությունները: Բոլոր միջազգային խորհրդաժողովներում մենք կողմ կլինենք նման փաստաթղթերին», այսպիսի հայտարարությամբ երեկ հանդես եկավ ՀՀ նախագահի մամուլի քարտուղար Արամ Աբրահամյանը: Նա հույս հայտնեց, թե Մինսկի խումբն ու նրա նախագահը կաջակցեն այդ գործընթացին եւ նույնպես կողմ կլինեն Ադրբեջանի եւ Ղարաբաղի միջեւ ձեռք բերված պայմանավորվածություններին: «Կարծում եմ, ասաց մամուլի քարտուղարը, դա կաջակցի ԵԱՀԽ ջանքերին, եւ կլուծվեն զինադադարի ռազմատեխնիկական ապահովման, ԵԱՀԽ դիտորդների աշխատանքային խմբերի ստեղծման, ՄԱԿ-ի բանաձեւում նշված միջազգային մարդասիրական նորմերի կատարման հետ կապված խնդիրները: Նրա կարծիքով, այդ դեպքում ԵԱՀԽ-ին կհաջողվի ստեղծել զինադադարի եւ ռազմական գործողությունների դադարեցման միջազգային երաշխիքներ: «Եթե Ադրբեջանն ու Ղարաբաղը խրատես լինեն եւ ոչ ոք նրանց չխանգարի, նրանք կարող են պայմանավորվել», ասաց նա:

Խոսելով նախագահ Տեր-Պետրոսյանի եւ ԼՂՀ ՊՊԿ նախագահ Ռոբերտ Քոչարյանի հանդիպման մասին, մամուլի քարտուղարը նշեց, որ քննարկած տարաբնույթ հարցերի էությունը մնկն է եղել գտնել ռազմական հակամարտությանը վերջ տալու ամենագործուն ճանապարհները: Պրն Աբրահամյանը տեղեկացրեց, որ Մինսկի խումբը Հայաստանի, Ղարաբաղի եւ Ադրբեջանի ներկայացուցիչներին օգոստոսի 9-ին հրավիրել է Հռոմ՝ մասնակցելու խորհրդակցությունների:

Հայաստանի մասնակցության հարցը քննարկվելու է հանրապետության Անվտանգության խորհրդի նիստում, որտեղ էլ կորոշվի, թե ո՞վ է գնալու: ԼՂՀ-ից տեղեկացանք, որ այդ հարցի առնչությամբ քննարկումներ Ստեփանակերտում նույնպես շարունակվում են: Միեւնույն ժամանակ երեկ Մինսկի խմբի կողմից Հայաստանի Ադրբեջանի եւ Լեռնային Ղարաբաղի ղեկավարությանն է ուղարկվել եւս մեկ փաստաթուղթ՝ «Անհետաձգելի միջոցառումների մասին» նոր ժամանակացույցը:

Ա. Հ.

Ղարաբաղ

Հրադադարը կրկին խախտվեց: Մարտեր Կաքավ բարձունքի համար

ԼՂՀ պաշտպանության բանակի տվյալներով, օգոստոսի լույս 6-ի գիշերը հրադադարը կտրուկ սրվել է ղարաբաղյան ռազմաճակատի հարավարեւելյան հատվածում: Մեծ ուժեր կենտրոնացնելով Ֆիզուլու շրջանի շարածքում, ադրբեջանական բանակի ստորաբաժանումներ ուժգին հրթիռահրետանային նախապատրաստությունից հետո անցել են լայնածավալ հարձակման Հադրութի եւ Մարտունու շրջանների սահմանամերձ բնակավայրերի ուղղությամբ, նպատակադրվելով առաջին հերթին տիրանալ մարտավարական մեծ նշանակություն ունեցող Կաքավ բարձունքին, որը գտնվում է Ֆիզուլի շրջկենտրոնի մերձակայքում: Ճավալված ուժեղ մարտերի ընթացքում թշնամուն հաջողվել է գրավել հայկական չորս դիրքերն: Օգոստոսի 6-ի առավոտյան ԼՂՀ զինված ուժերը կասեցրել են հակառակորդի առաջխաղացումը: Ժամը 13 անց 45 րոպեի դրությամբ մարտերն այդտեղ շարունակվում էին: Հայկական կողմից գրավել են 4, վիրավորվել 7 ազատամարտիկ: Նախնական տվյալներով, ադրբեջանական կողմից սպանվել են 14 մարտիկ, կան նաեւ վիրավորներ: Ժամը 17-ի դրությամբ հայկական ուժերին հաջողվել է վերագրավել բոլոր դիրքերը: Այդպիսով, ադրբեջանական կողմը երեքօրյա հրադադարի մասին պայմանավորվածությունը խախտեց:

Իրենց հերթին, Բաքվի աղբյուրները հաղորդում են, թե Ղարաբաղի ուժերը հարձակում են կատարել Գյուլիստանի ուղղությամբ:

Միաժամանակ, ՀՀ պաշտպանության նախարարության լրատվական ծառայությունից հայտնեցին, որ օգոստոսի 5-ի ժամը 18-ից մինչեւ օգոստոսի 6-ի ժամը 3-ը գնդակոծվել են Հայաստանի Տաուշի շրջանի Բերդ շրջկենտրոնը, Այգեձոր, Մովսես, Ներքին Կարմիրաղբյուր գյուղերը: Զոհվել է 1, վիրավորվել 8 խաղաղ բնակիչ, որից 6-ը ծանր: Կան զգալի ավերածություններ: Ըստ «Նոյյան տապան» գործակալության երեկ տարածած հաղորդագրության, օգոստոսի 5-ի ուշ երեկոյան գնդակոծվել են նաեւ Հայաստանի Նոյեմբերյանի շրջանի Կոթի եւ Կրասնոսելսկի շրջանի գիրքերը: Տուժածներ չկան:

«Ազգ»

Բոսնիա

Խնդրվում է չռմբակոծել

Բոսնիայում ՄԱԿ-ի խաղաղապահ ուժերի հրամանատար գեներալ Բրիկմանը արեւմտյան երկրներից խնդրեց օդային հարված չհասցնել սերբական դիրքերի վրա, մտավախություն հայտնելով, որ այդ դեպքում սերբերի հակահարվածի թիրախ կդառնան իր կառույց ստորաբաժանումները: «Պետք է առիթ տալ, որպեսզի Ժնեւում խաղաղության բանակցություններն արդյունավորվեն», ասաց նա: Մյուս կողմից, սերբերը երեկ դարձյալ զիջումների գնալու տրամադրություն ցուցաբերեցին, հույս ունենալով փրկել Ժնեւի բանակցությունները, որոնք կարող են վերսկսվել երկուշաբթի: ■

Սիգուայի կառավարությունը հրաժարական տվեց: Վրաստանի խորհրդարանի երեկվա արտահերթ նիստում հանդես գալով, վարչապետ Սիգուան ներկայացրեց իր կառավարության հրաժարականը, տեղի տալով տնտեսական խիստ միջոցառումների իր ծրագրի եւ Աբխազիայում վարած հաղթականությունից դժգոհության առաջ: Շեւարդնաձեն, որ նախորդ օրը զգուշացրել էր հաղթաթղթի պատերազմից, վարչապետի հրաժարականը բացատրեց խորհրդարանի հետ առճակատման չգնալու մտահոգությամբ:

Հայաստան

ԳԱԶԱՏԱՐԸ ԿՐԿԻՆ ՊԱՅԹԵՑՎԵՑ

Բնակչությանը էներգիա կտրվի օրական 1-2 ժամ

Երեկ, օգոստոսի 6-ին, գիշերը ժամը 4-ին Վրաստանի Գարդաբանիի շրջանի Վախտանգեսի գյուղի մոտակայքում, որը սահմանակից է Ադրբեջանին եւ գտնվում է Թբիլիսիից 40 կմ հեռավորության վրա, կրկին եւ արդեն այս տարի 6-րդ անգամ պայթեցվեց Հայաստան եկող 1000 միլիմետրանոց գազատարը:

«Վրացտրանսգազ»-ի դիսպետչեր Օթար Մեռաբիշվիլին Սնարին հայտնել է, թե վթարված տեղամասի վերականգնման համար կպահանջվի 2-3 օր: Գազի հոսքը հանրապետություն դադարեցվել է: ՀՀ կառավարության լրատվական ծառայությունից հայտնեցին, որ օպերատիվ կառավարման հանրապետական շտաբի հերթական նիստում, որը վարել է վարչապետ Հր. Բագրատյանը, նշվել է, որ վթարի վայր են ժամանել վրաց շինարարներն ու հայ մասնագետները: Ու թեեւ վերականգնման աշխատանքները կավարտվեն երկու օրից, սակայն անգամ գազատարի վերականգնումից հետո անմիջապես չի երաշխավորվում գազի մատակարարումը, քանի որ Թբիլիսիանը պատասխանել է Վրաստանից մինչեւ օգոստոսի 9-ը մարել 69 միլիարդ ռուբլի պարտքը, իսկառակ դեպքում կդադարեցվի գազի մատակարարումը Վրաստան, հետեւաբար նաեւ Հայաստան: Ելնելով ստեղծված վիճակից եւ նաեւ սեփական պաշարների հաշվին էլեկտրաէներգիայի արտադրության աստ հնարավորություններից, որոշվել է անցնել էներգիայի մատակարարման նոր ռեժիմի: Առաջին հերթին էլեկտրաէներգիա կստանան կենսատպահովման օբյեկտները, արդյունաբերական ձեռնարկությունները, գյուղատնտեսությունը, էլեկտրատրանսպորտը, երկաթուղին, ավիացիան: Բնակչությանը էլեկտրաէներգիա կտրվի նվազագույն չափով՝ օրական 1-2 ժամ:

«Ազգ»

Աշխարհ

Քրիստոֆերի շփումները շարունակվում են

Նախորդ երեկոյան Հորդանանի Հուսեյն թագավորի հետ Ամմանում տեսակցություն ունենալուց հետո, ինչպես հայտնել էին երեկ, Ս. Նահանգների պետքարտուղար Ուորեն Քրիստոֆերը երեկ առավոտյան վերադարձավ Երուսաղեմ, որտեղ իսրայելցի պատասխանատուների հետ կարճատեւ շփումներից հետո 24 ժամում 2-րդ անգամ եղավ Դամասկոսում, ուր հանդիպում ունեցավ արտգործնախարար Ֆարուկ Շարայի հետ: Տեսակցությունից հետո լրագրողների առաջ համատեղ մամուլի ասուլիսի ընթացքում պետքարտուղարը հայտարարեց, թե բոլոր շփումների ընթացքում «որոշակի առաջադիմություններ» են նկատվել արաբ-իսրայելական խաղաղության խոսակցությունների նկատմամբ, թեեւ, ավելացրեց, «դեռեւս շատ դժվարություններ կան հաղթահարելու»: «Այնուամենայնիվ, եզրակացրեց Քրիստոֆերը, ակնկալելով իր մարոնային այցելությունները, արդյունքներն ավելի դրական են, քան ակնկալում էի»: Դամասկոսից Քրիստոֆերը մեկնեց Իտալիա, որտեղ նրան սպասում է մի այլ կնճիռ՝ Բոսնիայի պատերազմը: Պետքարտուղարի կրկնակի այցելությունները Դամասկոս ցույց են տալիս, որ հակամարտության լուծման բանալի երկիրը Սիրիան է, որը հիմքեր ունի չվստահելու Իսրայելին:

Նորից Լիբանան-Իսրայել բախումներ

Իսրայելական մեկեւաբաթյա ռմբակոծումները հարավային Լիբանանի վրա որեւէ արդյունք չտվեցին: Հեզբոլլահի զինյալները երեկ նորից հրթիռակոծեցին Իսրայելի սահմանամերձ շրջանները, որին իբրեւ պատասխան իսրայելական հրետանին մոտ մեկ ժամ ռմբակոծեց Լիբանանի հարավային շրջանները, մինչ Լիբանանի վարչապետ Ռաֆիկ Հարիրին հաղորդում էր, թե Իսրայելի դեմ հրթիռակոծումները չեն դադարի, մինչեւ որ վերջինս չհեռանա հարավային Լիբանանում հաստատած «անվտանգության գոտուց»: Երեկ Լիբանանի մայրաքաղաքի մոտ տեղի ունեցավ ցնցիչ ոճիր. հյուրանոցի իր համարում իր օգնականի հետ սպանված գտնվեց Բեյրութի նահանգային մեծագույն մագնաս եւ լիբանանյան անկախության «հայրերից» Հանրի Ֆարոնը: Մյուս կողմից, Արեւմտյան ափի գրավյալ հողերում պաղեստինցի 3 զինյալներ երեկ առեւանգեցին իսրայելցի 2 զինվոր եւ 3-րդի հետ բախման ընթացքում սպանվեցին, սպանելով առաջին 2-ին:

Ընտրվեց Ճապոնիայի նոր վարչապետ

Ինչպես ակնկալվում էր, երեկ առավոտյան 2-րդ քվեարկությամբ Ճապոնիայի վարչապետ ընտրվեց Մորիհիրո Հոսոկավան, վերջ տալով վերջին 38 տարի ներին երկիրը ղեկավարած Ռամկավար ազատական կուսակցության գերակայությանը: Հոսոկավան, ինչպես գրել էինք նախապես, ընդդիմադիր 7 կուսակցություններից բաղկացած կոալիցիայի պետ էր ընտրվել մոտ 10 օր առաջ եւ բնականաբար նա էլ խորհրդարանի նիստի ընթացքում ընտրվեց վարչապետ: Նրա ընտրությունը հեշտ չեղավ: Այժմ ընդդիմության վերածված ՌԱԿ-ը ցույց տվեց, թե կարող է խոչընդոտել կոալիցիայի ցանկացած քայլ, որին համաձայն չէ: Եւ ամեն ինչ որոշվեց վաղ դոնորի ետեւում, որտեղ կողմերը համաձայնվեցին, թե Հոսոկավայի տնօրինության տակ երկրի քաղաքականությունը հիմնական հարցերում կմնա նույնը: ■

digitised by A.R.A.R.@

ՌՍՖՍՀ

Հանրաքվեական վարչությունում

Ռամկավար ազատական կուսակցության Հանրաքվեական վարչության օգոստոսի 5-ի նիստում ինքնակենսաբանական դարձած Քաղաքացիական հասարակության սահմանադրության խորհրդում ընդունված մի քանի հարցերի շուրջ ծագած տարբեր մոտեցումները: Վարչության առենապետ Ռուբեն Միրզախանյանը ներկայացնելով վիճահարույց դրույթները, մասնավորապես նշեց, թե հիմնականում տարաձայնություն է առաջացրել հանրաքվեության նախագահի ընտրության ձևը՝ ՌԱԿ-ի առաջնային մանդատ տալու դիրքորոշումը հավատարվել է ՀՀ նախագահին միայն խորհրդարանի կողմից ընտրելու առաջարկությունը: Նա հաղորդեց, որ ՍԽ-ի ՌԱԿ դաշինքությունը խորհրդակցելով դահանջ է դրել, որ եթե ոլեության գլխավորին առաջնային մանդատ չի տվելու, առնվազն դեմ է բացառվի նաև նրա ընտրությունը միայն օրենսդիր բարձրագույն մարմնում, ինչը սկզբունքորեն ընդունվել է ՍԽ-ի մյուս անդամների կողմից:

Վարչությունը, ելնելով ՀՀ սահմանադրության միասնական տարբերակի ստեղծման նպատակով փոխզիջման գնալու անհրաժեշտությունից, հավանություն տվեց ՍԽ-ում ՌԱԿ դաշինքության այդ մոտեցմանը: Համաձայնություն ստացան դիրքորոշումներ ընդունվեցին նաև ՍԽ-ում վերջնական ճշգրտման ենթակա մյուս հարցերի վերաբերյալ:

ՌԱԿ Հանրաքվեական վարչության տնտեսական խորհրդակցության բնագավառի գործունեության ուղենիշների մասին զեկուցեց վարչության անդամ Սամվել (Մելս) Սահակյանը: Որոշ ելույթներից հետո այն ևս հավանության արժանացավ: Հանձնարարվեց Սամվել Սահակյանի և Հայկ Կարապետյանի գլխավորությամբ գործող ՀՌԱԿ տնտեսական հանձնաժողովին փորձագետների խմբի ընդլայնմամբ և օգնությամբ մանրամասն ծրագիր դասդասել այդ ուղենիշների շրջանակներում:

Հ. Պ.

Բանավեճ

ԼՂՀ-ի ճանաչումը կարևոր քայլ է իրավահավասար սուբյեկտ դառնալու ճանապարհին

Մեր թղթակցին տված հարցազրույցում Հայաստանի Ռամկավար ազատական կուսակցության վարչության, ատենապետ Ռուբեն Միրզախանյանը հույս հայտնեց, որ ԼՂՀ եւ Ադրբեջանի իշխանությունների միջև սկսված բանակցությունները կարող են հիմք հանդիսանալ տարաձայնությունների խաղաղության հասնման գործընթացում: ՀՌԱԿ-ը կարևորում է ԼՂՀ-ի միջազգային հարաբերություններում իրավահավասար սուբյեկտ դառնալը եւ այդ տեսանկյունից շարունակում է ողջունել Հայաստանի Հանրապետության կողմից ԼՂՀ-ի ճանաչումը: Ռ. Միրզախանյանը գտնում է, որ Մարիո Ռաֆֆելլիի վերջին հայտարարությունը եւ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 853 որոշումը նրանց նախորդ քայլերի տրամաբանական շարունակությունն են: ՀՌԱԿ-ը ամենայն հարգանքով եւ ուշադրությամբ է վերաբերվում միջազգային հանրության դիրքորոշմանը, ի վերջո հաստատված լինելով, որ ՄԱԿ-ը տարաձայնությունների խաղաղության հասնման նպատակ է հետապնդում: Միաժամանակ ՀՌԱԿ-ը վստահ է, որ ոչ մի միջազգային նախաձեռնություն չի կարող հաջողությամբ ուսակվել, եթե չի բխում երկու կարևորագույն սկզբունքից. ԼՂՀ հայ ազգաբնակչության ինքնորոշման իրավունքից եւ նրա անվտանգության գոյատևման երաշխիքների անհրաժեշտությունից: Փորձը ցույց է տալիս, որ միջազգային հանրության բազմաթիվ նախաձեռնություններ չեն իրագործվել այս սկզբունքները անտեսելու պատճառով:

Ռուբեն Միրզախանյանը Հայաստանի ներկա իրավիճակը գնահատում է որպես «ոչ պատերազմ, ոչ խաղաղություն»: «Թեեւ բուն Հայաստանում զանգվածային գործողություններ տեղի չեն ունենում, բայց որոշ խաղաղական ուժերի եւ ազգային տնտեսության սերտաճման ամենոր ծավալները խաղաղություն չեն ենթադրում: Չվերահսկվող օդակներից ամենակարեւորները համարում եմ օդակայանը, վառելիքը եւ հացը: Հայաստանը նման էլ չէ պատերազմող պետության, քանի որ հարեւանի երկրի մասին մեր ավանդական պատկերացումները չեն ենթադրում բնակչության ակտիվ մասի բնաբնաջնջված գործունեություն եւ ադրենալինային»: Ըստ Միրզախանյանի, իշխանությունները տնտեսական բոլոր դժվարությունները փորձում են հիմնավորել պատերազմական իրավիճակով: Այդպես բացատրելն ավելի հարմար է: Բայց դա բուն պատճառը չէ: Պատճառն այն է, որ առաջադրվում է մեկ տնտեսական ծրագիր անցում շուկայական հարաբերությունների, բայց իրականում կենսագործվում է սոցիալիստական տնտեսավարման աղավաղված ձեւը:

ԼՏ

Ռեալ

Մարիուս Յուզբաշյանի գործի հետաքննությունը շարունակվում է

Հուլիսի 21-ին Երեւանի Կոմիտասի անվան զրոսայգում սպանված Հայաստանի ՊԱԿ-ի նախկին նախագահ Մարիուս Յուզբաշյանի գործի հետաքննությունը դեռեւս շարունակվում է: Այդ մասին մեր թղթակցին տեղեկացրեց Հայաստանի դատախազության քննչական մասի ղեկ Սուրեն Գյոզալյանը, նշելով, որ հանրապետության ազգային անվտանգության վարչության, ներքին գործերի նախարարության եւ դատախազության աշխատակիցներից կազմված քննչական խումբը քննություն է կատարում, ձեռնարկվել են օպերատիվ միջոցառումներ: Մարիուս Յուզբաշյանի դիակը դատական փորձաքննությունից հետո հանձնվել է հանգուցյալի հարազատներին: Հիշեցնենք, որ հանրապետության դատախազությունը հայտարարել էր, որ այն անձինք, ովքեր կհայտնեն այդ սպանության հետ կապված հավաստի տեղեկություններ, կստանան 1 մլն. ռուբլի դարձյալ 1993 թ. ռուսական դրամով:

Ընդ որում, սպանության մանրամասները հայտնող անձի գաղտնիությունը երաշխավորվում է:

«Ազգ»

Գրեթե

ԱՆԴՐԿՈՎԿԱՍ, ՌՈՒՍԱՍՏԱՆ, ԹՈՒՐՔԻԱ ԷՆԵՐԳԱՀԱՄԱԿԱՐԳ

Հայաստանի պաշտոնական մարմինները տեղյակ չե՞ն

Ադրբեջանը, Հայաստանը, Վրաստանը, Ռուսաստանը եւ Թուրքիան բանակցություններ են վարում միասնական էներգահամակարգ ստեղծելու մասին: Վրաստանի էներգետիկայի դեղարտամենտի նախագահ Յուրի Չեդիան հինգշաբթի օրը «ԻՏԱ»-ին հայտնել է, որ նոր համակարգը նախատեսում է 200 էլեկտրահաղորդման գծերի անցկացում Արխագիայից մինչեւ Կարս (Թուրքիա) եւ արդեն գործողների վերանորոգում:

Կողմերը, նրա խոսքերով, այդ նախագծին արդեն տվել են նախնական համաձայնություն: Այդ հարցի դրական լուծման դեպքում Վրաստանը կստանա տարադրանքի լրացուցիչ աղբյուր: Ռուսաստանից Թուրքիա ուղարկված էլեկտրաէներգիայի տարանցիկի համար: Հայաստանի էներգետիկայի եւ վառելիքի նախարարությունում փոխնախարար Կարեն Գալստյանը նշեց, որ իրենք տեղյակ չեն եւ խոստացավ ճշտել հաղորդվածի հավաստիությունը:

«Ազգ»

Սոցիալական

Շարժասանդուղքների տեղամասը «Միաբանության» պաշտպանության ներքո

Մեր թերթի երեկվա համարում տեղեկացրել էինք, որ մետրոպոլիտենի ղեկավարության եւ շարժասանդուղքների տեղամասի աշխատողների միջեւ աշխատանքային վեճը (շարժասանդուղքների տեղամասի աշխատողները պահանջում էին աշխատանքի պայմանների բարելավում եւ աշխատավարձի բարձրացում) ենթարկվել էր նաեւ «Միաբանություն» հայկական անկախ արհեստակցական միությունում: Քննարկելով աշխատանքային վեճի մանրամասները, արհմիության լիազոր ներկայացուցիչների խորհուրդը նշել է, որ «մետրոպոլիտենի շարժասանդուղքների տեղամասի աշխատանքային կոլեկտիվի բարձրացրած հարցերը հիմնավոր են, աշխատանքային կոլեկտիվի գործելակերպը բխում է աշխատանքային վեճերի կարգավորման օրենսդրությունից, եւ նախաորոշ հայտարարված նախազգուշական գործադուլի հեռանգումը, բացատրվում է մայրաքաղաքում բնակչության տրանսպորտային սպասարկման առումց այն էլ ծայրահեղ կացությամբ եւ վեճը բանակցությունների ու փոխըմբռնման մթնոլորտում լուծելու կոլեկտիվի ձգտումով»:

Ելնելով այս ամենից, «Միաբանություն» արհմիության լիազոր ներկայացուցիչների խորհուրդը որոշել է հավանություն տալ աշխատանքային վեճն օրենքով նախատեսված կարգով լուծելու գործելակերպին, դիմել Երեւանի մետրոպոլիտենի ղեկավարությանը եւ ՀՀ տրանսպորտի նախարարությանը՝ վեճը հարթել փոխըմբռնմամբ: Խորհուրդը Երեւանի մետրոպոլիտենում աշխատանքի պայմանների նորմերի խախտման կապակցությամբ որոշել է դիմել ՀՀ տրանսպորտի նախարարությանը, արհմիության հետ համատեղ երկու շաբաթվա ընթացքում մշակել տեղ գտած թերությունների վերացման ու դրանք վերացնելու միջոցառումների ծրագիր: Եւ անհրաժեշտության դեպքում հասկացնել համապատասխան միջոցներ: «Միաբանություն» արհմիության լիազոր ներկայացուցիչների խորհրդի որոշման մեջ նշված է նաեւ, որ «Միաբանությունը» իր վճռականությունն է հայտնում դեկավարության կողմից շարժասանդուղքների տեղամասի աշխատանքային կոլեկտիվի նկատմամբ անօրինական քայլերի դիմելու դեպքում կազմակերպության անդամների իրավունքների պաշտպանության հարցում միասնական ուժերով հանդես գալու կապակցությամբ: «Իրավիճակի հետագա զարգացումը ոչ պատասխանատվությունն ընկնում է դեկավարության վրա», ասվում է որոշման վերջում:

«Ազգ»

Գրեթե

Հարրի Գիլմորը ՀՀ կառավարությունում

Գիտության, առողջապահության, կրթության ու մշակույթի բնագավառներում հայ-ամերիկյան հետաքրքիր համագործակցության հարցերը շոշափվեցին Հայաստանի Հանրապետության դեսպանատան Արմենակ Ղազարյանի եւ Հայաստանի Հանրապետությունում Ամերիկայի Միացյալ Նահանգների արտակարգ եւ լիազոր դեսպան Հարրի Գիլմորի միջեւ կայացած հանդիպման ընթացքում:

ԱՄՆ-ի դեսպանը կարեւորեց երկու երկրների գիտության եւ մշակույթի գործիչների համագործակցությունը, շեշտելով այդ հարցում Հայաստանի Ամերիկյան համալսարանի դերը: Պայմանագրվածություն ձեւ բերվեց զարգացնել հայ դպրոցականների ուսուցումն ԱՄՆ-ում:

Հարրի Գիլմորը խոստացավ իր նպաստը բերել Հայաստանին անհրաժեշտ դեղորայքով եւ բուժարվարմամբներով օգնելու գործին:

Հանդիպմանը ներկա էր ՀՀ կառավարության արտաքին կապերի վարչության դեպ Վասիլի Ղազարյանը:

ՀՀ ԿԼՏ

Երեկ Հայաստանի կառավարությունում դեպ է կայանար հանրապետության գլխավոր դատախազ Արտավազդ Գեւորգյանի մամուլի ասուլիսը. Սակայն, ինչպես հայտնեց ՀՀ կառավարության մամուլի ծառայության ղեկավար Վ. Մանոյանը, հանրապետության դատախազը հիվանդության պատճառով չկարողացավ գալ մամուլի ասուլիսին:

«Ազգ»

Հայ ժողովրդի աշխատողների միությունը **ԱՕԿՍ-ի** *ցուցասրահում (Սրբոյան-3) օգոստոսի 9-ից 14-ը կազմակերպում է ժողովրդական վարպետ Իվետա Տակուբովայի ստեղծագործությունների (կոլաժ) ցուցահանդես:*

Ցուցահանդեսի բացումը օգոստոսի 9-ին, ժամը 15.00-ին

Մոլդովա

Քաղաքական ճգնաժամ

Մոլդովայի խորհրդարանը չի վավերացրել հանրապետության ԱՊՀ կազմը մտնելու մասին փաստաթուղթը: Նոյեմբերի ութ երեկոյան կայացած քվեարկության ժամանակ 188 պատգամավորներից 162-ը քվեարկել են պայմանագրերը վավերացնելու օգտին, 22-ը դեմ, 4 թերթիկ անվավեր է ճանաչվել: Հարցի դրական լուծման համար չի հերիքել չորս ձայն:

91 պատգամավոր, որոնք ներկայացնում են ընդդիմադիր ժողովրդական ճակատը, մտավորականներին, անկախականներին եւ ժողովրդավարներին, չեն մասնակցել քվեարկությանը:

Արդյունքները հրաղարակելուց հետո բազմաթանակ ագրարային խմբակցության ղեկավար Դումիտրու Մոցոյանը, որը կողմնակից էր ԱՊՀ կազմի մեջ մտնելուն, կոչ է արել վայր դնել լիազորությունները եւ արտահերթ ընտրություններ անցկացնել: «Մենք օժտել ենք նախագահին լրացուցիչ լիազորություններով: Թող նա էլ կառավարության հետ մեկտեղ կառավարի հանրապետությունը, իսկ անգործունակ խորհրդարանը պետք է գրել», ասել է նա:

Ագրարականների, անկախների եւ համաձայնության պատգամավորական խմբերն արդյունքների հրաղարակումից հետո հրաժարվել են արտահերթ նստաշրջանի աշխատանքներին մասնակցելուց:

ԻՏ

Բաքվի ռադիոյի հաղորդման համաձայն, Լենինականում կբացվի Իրանի Իսլամական Հանրապետության հյուպատոսություն: Սուդանի Ժողովական Հանրապետության ղեկավարության հետ հանդիպման ժամանակ Ադրբեջանի վարչապետ Սուրաթ Հուսեյնովը նշել է, թե հետագայում նախատեսվում է Իրանի հետ սահմանային ռեժիմի կրճատում եւ հարեւան երկրի հետ ազատ տնտեսական գոտու ստեղծում:

«Ազգ»

Ռեալ

Ալեքսեյ Գումենոմի հայտարարությունը

«Դարեւան ոգեությունները օտարում նպաստ նշանակում է Սուդանի Ժողովական Հանրապետության տնտեսության կործանում», խոսքար սեռվիս գործակալության թղթակցին տված հարցազրույցում հայտարարեց հանրապետության ղեկավար Ալեքսեյ Գումենոմը, մեկնաբանելով ԱՊՀ երկրների ղեկավարներին այդ ինքնախարության հոած դիմումը, որտեղ հանրակցության կազմի մեջ մտնելու խնդրանք էր արտահայտված: Գումենոմի խոսքերով, «ակնհայտ է, որ Ադրբեջանն ի վիճակի չէ վերականգնելու նախկին ԽՍՀՄ հանրապետությունների հետ խզված տնտեսական կապերը, եւ այս գործում հարկ է լինում հենվել սեփական ուժերի վրա»: «Ցերեւս մոտ ժամանակներս Սուդանի Ժողովական Հանրապետության դատարկությունը որոշես դիտող մասնակցի հանրակցության ներկայացուցիչների հանդիպումներին ու խորհրդակցություններին», ընդգծեց նա, վկայակոչելով Մինսկում ԱՊՀ քարտուղարության հետ ձեռք բերված նախնական համաձայնությունը:

Սնարք

Ադրբեջանի քաղաքացիները կանգկացնեն նախագահին վստահություն հայտնելու հանրաքվե

Օգոստոսի 28-ին համաժողովրդական հանրաքվեի անցկացման օրը Ադրբեջանի քաղաքացիները պետք է դատաստան հեռեյալ հարցին. «Վստահո՞ւմ եք, արդյոք, Ադրբեջանի Հանրապետության նախագահ Աբուլֆազ Էլչիբեյին»: Այդ մասին ՌԻԱ-ի թղթակցին հայտնեց կենտրոնական ընտրական հանձնաժողովի աշխատակից Ռաֆայել Նագիեւը: Նա առաջիկա հանրաքվեի դժվարությունը համարեց «օկրուգային հանձնաժողովների աշխատանքին Ադրբեջանի բոլոր կուսակցությունների մասնակցությունը»: Արդարադատության նախարարությունում գրանցված է 32 կուսակցություն, իսկ օրենսդրության համաձայն, օկրուգային հանձնաժողովների անդամների թիվը սահմանափակված է 19-ով: Օկրուգային այն հանձնաժողովներում, որտեղ բավարար տեղեր կան, այս կամ այն կուսակցության ներկայացուցչի մասնակցությունը կորոշվի վիճակահանությամբ, ասաց Նագիեւը:

Սնարք

Դրամազանգվածի 61.9 տոկոսը բնակչության ձեռքին է

«Գլխավոր սխալն այն հանգամանքն է, որ մանաթը շրջանառության մեջ դնելով, Ադրբեջանը լիովին չանցավ ազգային դրամին եւ դուրս չեկավ ռուբլու գոտուց, թեեւ այս ուղղությամբ որոշակի աշխատանք կատարվեց», խոսքար սեռվիս գործակալության թղթակցին ասաց խորհրդարանի բյուջեի վերահսկման հանձնաժողովի նախագահ, Ադրբեջանի գյուղատնտեսության փոխնախարար Ջուվանշիր Նուրիեւը: Նա նաեւ նշեց, որ հանրապետության նախկին ղեկավարության չմտածված գործողությունների հետեւանքով, ազգային դրամը մտցվելու պահից 500 տոկոսանոց արժեզրկման է ենթարկվել: Նուրիեւը ընդգծեց, որ մանաթը անհնար է զերծ պահել արժեզրկման հետագա ալիքից, քանի որ այն կապված է ռուբլու հետ: Խորհրդարանական հանձնաժողովի ղեկավարի խոսքերով, ամենամեծ ֆինանսական խնդիրն այժմ այն փաստն է, որ մանաթը շրջանառություն չի վերադառնում. վերջին 6 ամսում բնակչության մոտ մնացած դրամազանգվածը կազմել է 61,9 տոկոս, իսկ մարդկանց ձեռքին գտնվող կանխիկ դրամի եւ շրջանառու դրամի հարաբերակցությունը 18:1 է: Դրամը շրջանառության մեջ պահելու եղանակներից մեկը աշխարհի շատ երկրներում օգտագործվող վարկային քարտերի կիրառումն է: Նուրիեւի կարծիքով, այդ համակարգն անհայտման պետք է ներդրվի Ադրբեջանում: Նրա կարծիքով, ներդրման ծախսերը կփոխհատուցվեն արժեզրկման մակարդակի նվազման հաշվին: Բացի դրանից, դա թույլ կտա կանխել դրամի թղթարկումը, որին կառավարությունը ստիպված կլինի դիմել շրջանառու դրամազանգվածի բացակայության պատճառով:

ԼՏ

digitised by A.R.A.R.@

Ինֆորմացիոն

ԲԼՈԿՈՎ, ԲԻՐԻԿՈՎ ՈՒ ՄՆԱՑԱԾ «ԹԱՇԱԽՈՒՍՏՈՎ»

Հեռուստատեսությամբ ու զանգվածային լրատվության մյուս միջոցներով հաճախ են հայտարարություններ ու գովազդներ հաղորդում այս կամ այն ադրանքային բորսայի կամ որեւէ ֆիրմայի մասին, որ կարող է հնարավորություն ընձեռել ձեռք բերելու տարատեսակ ադրանք: Երբ եթեւան-«Զվարթնոց» օդանավակայան ճանապարհը կտրելու առիթ է լինում, այդ ճանապարհը երիզող ադրանքամատակարարային խմբախանակներն ադրանքային բորսայի կամ մթերքի ու ալկոհոլի արտադրությամբ եւ արտահանությամբ զբաղվող ֆիրմաների դահեսների տղավորություն են ստեղծում:

Ամբողջ այն ադրանքների տեսականին, որ վաճառվում է մասնավորապես Երեւանի սեղանիկներին, բազմատեսակ կրոպակներում ու խանութներում, իր նախնական «գրանցումն» է ստանում այս ճանապարհից մինչեւ «Զվարթնոց» օդանավակայան: Այս տարածքներից ադրանքը «բիրիկով» գնվելով, արդեն ավելացված գնով վաճառահանվում է Երեւանում եւ այլուր: Ինչպես կարելի է եզրակացնել, նշված ծրեւաադարանի եւ մյուս տեղերի, այդ թվում Երեւանի, ներմուծված ծխախոտների եւ օղիների, գարեջրի, հրուշակեղենի գների միջեւ տարբերության դրամական տարբերությունն է հաճախորդների հիմնական սնուցիչ երակը հանդիսացող «Զվարթնոց» օդանավակայանից:

Մի փոքր շրջելով արդեն հիշատակված մերձօդանավակայանային «ադրանքադահեստարաններում», անմիջապես աչքի է զարնում, որ դրանց տեսականին շատ քիչ տարբերություն ունի միմյանցից: արտասահմանյան ծխախոտներ՝ «Bond», «Peer», «L&M», «Marlborro» եւ այլն, «Էլցին», «Սմիռնոֆ» եւ այլ տեսակի օղիներ, «Սնիկերս», «Մարս» շոկոլադներ, գարեջուր, ծուռոն, շոր սպիրտ... Տարբերությունն այստեղ էլ, իհարկե, գների մեջ է ու վաճառողների տեսքի, բանակի, տարիքի, տրամադրվածության: Իսկ վերջին օրերին այս ամենին ավելացել է նաեւ շատերին անհանգստություն պատճառած ու շոկային վիճակի մեջ գցած Ռուսաստանի «դրամանենգությունը»: Ու գների միջեւ եղած տարբերությանն ավելացել է նաեւ փողերի տարբերակումը: գինը կարող է լինել հին փողով եւ նոր փողով, կամ միայն նորով, կամ էլ, որ գուցե շատերի համար անսպասելի է, միայն հին փողով:

Մի կողմից, վերավաճառողների համար լայն հնարավորություն է ստեղծվել ցանկացած փողով գնում կատարել (որովհետեւ նոր փողով ադրանքն ավելի էժան կարելի է գնել, իսկ վաճառել կարելի է եւ հին փողով): Մյուս կողմից, սահմանափակվել են հնարավորություններն այն մարդկանց, ովքեր չունեն 1993 թ. տպագրության բրդադրամներ: Այս ամենին ի հավելումն նշենք, որ նոր 1993 թ. բրդադրամներն արդեն վաճառքի են հանված... ձեռքի վրա եւ հին բրդադրամների հետ փոխանակվում են 30 տոկոս հավելումով: Միայն մի փոքրիկ «Peer» ծխախոտի առուծախի հետ կապված օրինակով կարելի է ճոտավորապես դատկերացնել այն, ինչ կատարվում է վերոհիշյալ «դեղքի վայրում»: Եւ այստեղ, «Peer» ծխախոտի մեկ բլոկը տեղում հին փողով արժի 3600-3800 ռուբլի, նոր փողով՝ 2900-3000 ռուբլի: Ուզենք-չուզենք առեւտրի մի բանակցության դրվագներից. «Peer»-ը ինչքա՞ն ա»: «Երեք ու վեց հնով, երկուս ու իսկ նորով»: «Աղն, երկուս ու ութով տար, մի տասը բլոկ վերցնում եմ»: «Օ՛ չավդ տանեմ, երկուս ու ութով որ քեզ տամ, էլ տակն ինձ ի՞նչ ա մնում»: «Այ ախպեր ջան, քո ադրանքն ա, ոնց էլ լինի, քեզ մի բան կմնա»: «Տո, չէ, այ ախպեր, ես դրանցն ծախում եմ»: «Լավ, հիմա ինչքա՞ն ես իջնում»: «Վերջին գինը 2850 ռուբլի»: «Նոր փողով ա, չէ՞»: «Այ, ախպեր, խաղ ենք անում, ինչ ա, ասի որ հնով 3600 ա»: Այդ միջոցին վազելով մոտենում է 10-13 տարեկան մի տղա ու վաճառողի ականջին ինչ-որ բան շշնջում: Սա մի դատ մտածում է ու առաջադրանք տալիս լրտերին. «Վազի, մի հաց տղերին առա, որ էնա «Երազը» կայնած ա: Իրեք ու չորսով «Peer» ա բաժանում»: Քիչ թե շատ գործին տեղյակ ընթերցողը կեզրակացնի, որ «Երազն» օդից չի իջել, ու ոչ էլ ծխախոտն է գետից կամ լճից բռնվել: Պարզ է, որ օդանավակայանում ինքնաթիռ է իջել, ու «Երազը» միանգամից տեղում փողը տվել, իր չափով բարձել, եկել է: Հիմա նա կբաժանի իր գնով, որից հետո բաժանված հասկանալի է, որ բաժանել բառը դայմանական է՝ ադրանքը կվաճառվի արդեն նոր ավելի բարձր գնով: Շարունակենք տարեառային խոսակցություններն ունկնդրել. «Ռուբ ջան, իրիկունը կգամ, հաշիվները կփակենք»: Վաճառողի խոսքն ուղղված է բացօթյա կրպակի առջեւ հայտնված մուգ ակնոցներով մի անծանոթության, որը, ըստ երեւույթին, արդեն հասցրել է բողել մի շարք կրպակներ: Ինչպես երեւում է, նա ադրանքատերն է ու մտահոգված է իր հաշիվներով: Այդ դահին մոտենում է մի այլ գնորդ. «L&M»-ն ի՞նչ արժի»: «Նոր փողով 6400, կարճիր 10 հազարանոցով 7200, խառը փողով՝ 7400»: Գնորդը գների այդ հեղեղից անակնկալի գալով, նորից փորձում գինը ճշտել: «Դե, որ էդքան դարզ բացատրությունը չես հասկանում, ո՞նց ես առնելու» ասում է դատասխանը: Փողախաղը երկար-բարակ բացատրելու ցանկություն եւ նդատակ չունենալով, ասենք, որ մյուս ադրանքները եւս այսօրինակ խոսք ու գույցի առիթ են ստեղծում: Արդյունքում այդ ադրանքն ինչ-որ ձեւով հայտնվում է մասնավորապես մայրաքաղաքում եւ այս անգամ ավելի բարձր գնով սկսում «դվիժենի տենել»:

Միեւնույն ժամանակ, արտասահմանից զանազան կազմակերդությունների, անհատների, դետությունների կողմից նվիրատվություններ, մարդասիրական օգնություններ են ուղարկվում Հայաստան, որ, ինչպես դատում են օգնություն ուղարկողները, սննդամթերքի դակաս է զգացվում: Հետաքրքիր է, ի՞նչ կմտածեն նրանք, մի անգամ կտրելով «Զվարթնոց» օդանավակայան-Երեւան ճանապարհը, եւ ի՞նչ են մտածում արդեն դրան ականատես եղած բարեգործ-նվիրատուները, որ Հայաստանը ստիպում է խմիչքների ու հրուշակեղենի, ծխախոտի, տարատեսակ թխվածքաբլիթների ծառայության ի՞նչ, որ բոլորն էլ այնքան ունեն, որ արդեն հանել ճանփի՞ն են գուցադրում: Միգուցե կենքադրեն, թե Հայաստանում բիզնեսը միանգամից լայն ծավալ է ստացել հանձին վերոհիշյալ առեւտրական հարաբերությունների: Այնքա՞ն, որ արդեն նույնիսկ խոսակցություններ կան, թե ով որ այդ գործով չի զբաղվում, սոցիալիզմի կողմնակից է: Մինչդեռ, մեր միակ փրկությունը կաղիտալիզմն է, որովհետեւ այդ բառի հիմքը կաղիտալ բառը, կաղիտալ հասկացությունն են, այսինքն... փողը: ՍԱՍԱ ԱՆԱՍՊԵՏՅԱՆ

Էներգետիկա

Սեմինար խորհրդակցություն

Էներգեկտիկ ճգնաժամը չորել է մեր դռանը: Վերջին երկու տարիների ձմռան դժվարությունները խորհելու առիթ են տալիս: Ի՞նչ է սդասվում մեզ վաղը. հնարավո՞ր է արդյոք գալիք ձմռան ընթացքում հաղթահարել կամ գեթ որոշ չափով մեղմացնել սդասվող էներգետիկ ճգնաժամը: Սակայն այս հարցին էր նվիրված օգոստոսի վեցին ՀՀ էներգետիկայի եւ վառելիքի նախարարությունում տեղի ունեցած սեմինար-խորհրդակցությունը, որում բարձրացվեցին հարցեր ճգնաժամային իրավիճակներում առաջնային էներգադաշարների լավագույնս բաշխման հարմար: Սեմինարին իրենց մասնակցությունն էին բերել ոչ միայն մեր հանրադետության, այլեւ արտասահմանից ժամանած մասնագետ գիտնականներ:

Բացման խոսքով հանդես եկավ ՀՀ էներգետիկայի եւ վառելիքի փոխնախարար Կ. Գալուստյանը, ներկայացնելով Հայաստանի էներգետիկայի առջի վիճակը եւ դժվարությունները դայմանավորված վառելիքաէներգետիկ դաշարների ձեռք բերման եւ բաշխման հետ: Դոկտոր Լ. Եղիազարյանի զեկուցումը նվիրված էր ճգնաժամային իրավիճակներում Երեւանի էներգամատակարարման լավագույն սխեմաների մշակմանը: Հետաքրքիր հաղորդումներով հանդես եկան. դոցենտ Ռ. Խաչատրյանը, դրոֆեսորներ Լ. Հովհաննիսյանը, Լ. Ղուլյանը, Դ. Աբրահամյանը, ԱՄՆ-ից Գարմանը եւ այլ անձինք:

Քննարկման արդյունքները մեկ անգամ ես վկայում են, որ գալիք ձմռան ընթացքում հնարավոր է որոշ չափով մեղմացնել սդասվող էներգետիկ ճգնաժամը: Այսինքն, մենք այլեւս չենք տեսնի այն սարսափները, ինչ տեսանք անցած ձմռան ժամանակ:

ՍՏԵՓԱՆ ՊԱՊԻՉՅԱՆ
էներգետիկայի հայկական ԳՀ ինստիտուտի ավագ գիտաշխատող

Հուլիսին դադարել է արդյունաբերական արտադրության ծավալի անկումը

ՀՀ արդյունաբերության նախարարությունը ենթակա ձեռնարկություններ 1993 թ. հուլիս ամսին 16 մլրդ. ռուբլու արտադրանք են բողարկել: Հունիսին գերիշխում էր ոսկերչական ճյուղի արտադրանքը, որը կազմել է արդյունաբերության արտադրանքի ընդհանուր ծավալի 70 տոկոսը: Սակայն հուլիսին այն կազմել է ընդամենը 24 տոկոս: ՀՀ արդյունաբերության նախարարության լրատվական կենտրոնի տնօրեն Գեղամ Գրիգորյանը Նոյյան տաղան գործակալության բդթակցին հայտնել է, որ միեւնույն ժամանակ բողարկվող արտադրանքի ընդհանուր ծավալում զգալիորեն մեծացել է մեքենաշինության (արտադրանքի ընդհանուր ծավալի 58 տոկոսը), մետալուրգիայի, քիմիական եւ էլեկտրատեխնիկական ճյուղերի դերը: Այսդես, «Նաիրիտ» գիտարտադրական միավորումը հուլիս ամսին 420 մլն. ռուբլու արտադրանք է բողարկել, մինչդեռ հունիսին 265 մլն ռուբլու: Մեծ ծավալի արտադրանք են բողարկել նաեւ հետեւյալ ձեռնարկությունները «Հայէլեկտրամեքենա» 780 մլն. ռուբ., «Լույս» 434 մլն. ռուբ., «Կասնազ» 360 մլն. ռուբ., «Քիմռեակտիվ» 250 մլն. ռուբ., «Հրազդանմեքենա» 129 մլն. ռուբ., «Երազ» 300 մլն. ռուբ.: ԼՏ

Դարձվածքներ

Խոլերայի դեղքեր եղել են Թուրքիայում եւ Իրանում, իսկ Հայաստանում՝ ոչ

Անդրադառնալով խոլերայի համաճարակի դեղքերին, երեկ հանրադետության գլխավոր սանիտարական բժիշկ Առարատ Մկրտչյանը նախ լրագրողներին ծանոթացրեց աշխարհի տարբեր երկրներում խոլերայի տարածման դեղքերին: Վերջին տվյալներով, Տաջիկստանում արդեն արձանագրվել է խոլերայի 7 դեղք, Ադրբեջանում 15, Վրաստանում 7, Կրասնոդարում 3 եւ Ռուսդիում 2: Խոլերայով վարակի դեղքեր են արձանագրվել նաեւ Սանկտ-Պետերբուրգում, Բելգիայում, Ասիական մի շարք երկրներում: Պրն. Մկրտչյանը մասնագդության հայտնեց հատկապես Թուրքիայում եւ Իրանում արձանագրված խոլերայի համաճարակի դեղքերի աճքդով, նշելով, որ այժմ հանրապետությունից մեծ թվով զբոսաշրջիկներ են մեկնում այդ երկրներ եւ վարակի տարածման հնարավորությունը մեծանում է: Միեւնույն ժամանակ գլխավոր բժիշկը հայտարարեց, որ Հայաստանում խոլերայով հիվանդություններ չեն արձանագրվել: Նրա ասելով, Հայաստանը նախկին Խ. Միության այն միակ հանրադետությունն է, որտեղ որեւէ խոլերայի դեղք չի արձանագրվել:

Ինչ վերաբերում է աղիքային խմբի հիվանդություններին, ապա նրա ասելով, դրա մակարդակը էապես չի տարբերվում նախորդ տարիների մակարդակից:

Խոլերայի հարուցիչի հայտնաբերման համար դետական համաճարակային ծառայության կողմից անցկացվում է արտաքին մթնոլորտի հետազոտում, բաց ջրամբարներից վերցվում են նմուշներ:

Ամեն տարի Արտաքին գետում հայտնաբերվում է խոլերայի հարուցիչ: Այս տարի նման մի հարուցիչ է հայտնաբերվել նաեւ Երեբունու երջանի Շահումյանի ջրանցքում: Ի՞նչ ձեւերով է տարվում դայքարը: Այս հարցի կապակցությամբ դրն. Մկրտչյանը նշեց, որ օգոստոսի 3-ին առողջապահության նախարարությունում կայացավ հանրապետության արտակարգ համաճարակային հանձնաժողովի նիստ, որ քննարկվեցին հարեւան դետություններից խոլերայի ներթափանցումը կանխելու ուղղությամբ տարվող միջոցառումները:

Նախ, դետք է վերահսկողություն սահմանել հանրապետություն մուտք գործող անձանց նկատմամբ, եւ հատկապես սննդամթերքի: Դետք է ստուգվեն թե օդային, թե երկաթուղային ճանապարհներով ժամանող անձինք: Վերահսկման աշխատանքները դետք է ծավալեն այդ գերատեսչությունները եւ մաքսային ծառայությունները:

Երեւանից վերահսկողություն է սկսվում հանրապետության բաց ջրամբարներում մարդկանց լողը արգելելու ուղղությամբ: Հանձնարարված է ուժեղացնել ջրամբարների դաշտպանությունը: Հանձնարարվել է նաեւ, որդեսզի կոյուղու եւ ջրատարների վթարները անհապաղ վերացվեն:

Սանիտարական գլխավոր բժիշկը խոսեց նաեւ այլ վարակիչ հիվանդությունների մասին: նշեց նաեւ, որ „սերտ համագործակցություն կա Լեռնային Ղարաբաղի համապատասխան մարմինների հետ, եւ Հայաստանի առողջապահության նախարարությունը շարունակում է անհրաժեշտ օգնություն ցույց տալ: Ա. Հ.

Թուրքիայից Կրասնոդար ժամանած ինքնաթիռում հայտնաբերվել է մի ուղեւոր խոլերայի ախտանշաններով

Բացի նրանից հոսպիտալացվել են 3 հոգի, որոնք [illegible] եկ հարուցել, եւ 27 ուղեւոր[illegible] փոխել են հիվանդների հետ: ԻԴ

Էներգետիկա

Հուլիսին դադարել է արդյունաբերական արտադրության ծավալի անկումը

ՀՀ արդյունաբերության նախարարությունը ենթակա ձեռնարկություններ 1993 թ. հուլիս ամսին 16 մլրդ. ռուբլու արտադրանք են բողարկել: Հունիսին գերիշխում էր ոսկերչական ճյուղի արտադրանքը, որը կազմել է արդյունաբերության արտադրանքի ընդհանուր ծավալի 70 տոկոսը: Սակայն հուլիսին այն կազմել է ընդամենը 24 տոկոս: ՀՀ արդյունաբերության նախարարության լրատվական կենտրոնի տնօրեն Գեղամ Գրիգորյանը Նոյյան տաղան գործակալության բդթակցին հայտնել է, որ միեւնույն ժամանակ բողարկվող արտադրանքի ընդհանուր ծավալում զգալիորեն մեծացել է մեքենաշինության (արտադրանքի ընդհանուր ծավալի 58 տոկոսը), մետալուրգիայի, քիմիական եւ էլեկտրատեխնիկական ճյուղերի դերը: Այսդես, «Նաիրիտ» գիտարտադրական միավորումը հուլիս ամսին 420 մլն. ռուբլու արտադրանք է բողարկել, մինչդեռ հունիսին 265 մլն ռուբլու: Մեծ ծավալի արտադրանք են բողարկել նաեւ հետեւյալ ձեռնարկությունները «Հայէլեկտրամեքենա» 780 մլն. ռուբ., «Լույս» 434 մլն. ռուբ., «Կասնազ» 360 մլն. ռուբ., «Քիմռեակտիվ» 250 մլն. ռուբ., «Հրազդանմեքենա» 129 մլն. ռուբ., «Երազ» 300 մլն. ռուբ.: ԼՏ

Էներգետիկա

Զորակոչը գերազա՞նց

Հրազդանի զինկոմիսարիատից հայտնում են, որ Հրազդանի եւ Չարենցավանի երջաններում գարնանային զորակոչն անցկացվել է գերազանց արդյունքով՝ 120 տոկոսով: Բանն այն է, որ չորս տարի շարունակ զորակոչը դատշաճ կերդով չի կայացել եւ հնից մնացած դաշտարներով կատարվել եւ գերակատարվել է գարնանային զորակոչի դլանը: Այդուհանդերձ, զինկոմիսարիատում կարգուկանոն կա. փափուտի մեջ գտնվող 160 զինապարտների գործերը հանձնված են միջերջանային դատախազություն, իսկ մնացածի քննությունն իրականացնում է ներքին գործերի բաժինը:

Մյուս կողմից, մինչեւ օրս դաշտպանության նախարարությունը տրանսդորտային միջոցներից օգտվելու համար զինկոմիսարիատին վառելիք չի հատկացրել: Անհրաժեշտ վառելիք հայթայթելու համար զինկոմիսարի նախաձեռնությամբ բոլոր աշխատակիցներին, սկսած զինկոմից մինչեւ վերջին հավաքարար, դրամական օգնություն են տվել:

Տրոլեյբուսը կփրկի

Հրազդանն արդյունաբերական խոշոր հնարավորություն ունեցող երջան է, եւ ներկայիս երջափակման ու վառելիքի ճգնաժամի դայմաններում հնարավոր չէ վառելիքով աշխատող տրանսդորտային միջոցներով ադահովել բանվորության լիարժեք տեղաշարժը, ուստի Հրազդանի քաղդրկոմը, համաձայնության գալով հաղորդակցության եւ տրանսդորտի նախարարության հետ, որոշել է մոտ ադագայում 7,5 կիլոմետրանոց տրոլեյբուսի գիծ անցկացնել: Այն քաղաքի կենտրոնը կկապի գործարանային համալիրի հետ:

Կարտադրվեն նավթավառներ

«Հրազդանմաշ» դետական ձեռնարկության արտադրամասերից մեկում սկսվել է նավթավառների արտադրությունը: Այն առաջին հերթին կմատակարարի գործարանի աշխատակիցներին, այնուհետեւ կկազմակերդվի զանգվածային վաճառք: Սարքը ծիշտ օգտագործելու դեդքում բացառվում է ծխարտադրությունը, նվազագույնի է հասցված ծխավող վառելանյութի նավթի կամ տոլյարայուղի խանակությունը: Մասնագետների կարծիքով, այն կարելի է օգտագործել նաեւ ձմռանը ջեռուցման նդատակով, եթե նրան կցվի ծխատար խողովակ:

ՍԱՐՈ ՍԱՐԳՍՅԱՆ
Մեր սեփ. թղթակից, Հրազդան

Դիլիջանում բնակվում է 31 հազար մարդ

Ըստ Դիլիջանի քաղխորհրդի գործադիր կոմիտեի նախագահ Ժորա Պետրոսյանի, չնայած ամբողջ հանրապետությանը բնորոշ արտահոսքին, վերջին երկու տարվա ընթացքում քաղաքի բնակչության թիվը գործնականում չի փոփոխվել, եւ այժմ մոտ 31 հազար է, որոնցից 200-ը Ադրբեջանից բռնագաղթվածներն են (երկու տարի առաջ հազարն էին): Քաղաքում զգալի չափեր է ընդունել գործազրկությունը. 18 հազ. աշխատունակ բնակչությունից 2,7 հազարը չի աշխատում: ԼՏ

Հայտարարություն

Երեւանի սիմֆոնիկ նվագախումբը հայտարարում է հերթական տարեկան մրցույթ բոլոր խմբերում:

Դեպքում

Մեկ մաս որեւէ կոնցերտից կամ սոնատից:

Մրցույթը կկայանա օգոստոսի 12, 13-ին ժ. 10-ից:

Հայտերն ընդունվում են մինչեւ օգոստոսի 10-ը «Արամ Խաչատրյան» համերգասրահում:

Մրցույթին մասնակցել ցանկացող ները տեղեկությունների համար կարող են զանգահարել

58 07 01

հեռախոսահամարով

digitised by A.R.A.R.@

Վերլուծություն

ՇՐՋԱՆՈՒՄ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Ադրբեջանի այն դատկերը, որ գծում է «Քրիստոսը Սայրնս Մոնիթըր» հայտնի թերթը, հենվելով թուրք դաշտոնատարների վրա, նորություն չէ մեր ընթերցողների համար: Այդ երկրում կատարված վերջին իրադարձությունները մենք ներկայացրել ենք հաջորդաբար: Հետաքրքրական է այն իրականության ընդունումը, ինչ վերաբերում է շրջանի կացությանն ու ուժերի հարաբերակցությանը, որ արևմուտքցիները, առաջնորդվելով իրենց ստերեոտիպերով, նախկինում մերժում էին ճանաչել: Երկրորդ, «Նյու Յորք Թայմզի» նյութում, կարծում ենք, այդ ստերեոտիպերը դեռևս դահիճանված են: Ասելով, թե նոր անկախացած Կովկասում և Միջին Ասիայում իշխանության գլուխ են նախկին կոմունիստական առաջնորդները և այդ երկրների ժողովրդավարությունը դեռևս նորոգումների կարիք ունի, թերթը մեկ տող անգամ չի գրում Հայաստանի մասին, որ իր ժողովրդավար դատկերով բոլորովին չի համընկնում նախորդներին:

Կովկասյան նորաստեղծ հանրապետությունները չափազանց մեծ կարիք ունեն օտարերկրյա կապիտալի, սակայն մարդկային իրավունքների խախտումները տեղի են ունենում նրանցից յուրաքանչյուրում: Այս երևույթն էլ Արևմուտքի գործարար շրջանակներին ստիպում է, նախքան ներդրումներ կատարելը, դահանջել, որ այդ իրավունքները վերականգնվեն ու հարգվեն:

Հունիսի 18-ին տեղի ունեցած հեղաշրջումը Ադրբեջանում իշխանության գլուխ բերեց նախկին կոմունիստ Ալիևին: Նա լուացրեց այլ կոմունիստ ղեկավարների (Վրաստանում՝ Շեւարդնաձեն, Թուրքմենստանում՝ Նիյազովը, Ղազախստանում՝ Նազարբաևը) շարքը, որոնք առանձնապես մեծ հետաքրքրություն չեն ցուցաբերում մարդու իրավունքների հանդեպ: Թուրքմենստանի և Ուզբեկստանի ծայրահեղորեն ճնշողական իշխանությունների ներքին խախտումներն անխուսափելի են: Կովկասում հակամարտության հետևանքով զոհվել են ընդհանուր առմամբ 15 հազար քաղաքացիներ: Քաղաքացիական օբյեկտները թիրախ են դառնում գնդակոծությունների, իսկ շրջափակումը արգելում է սննդամթերքի ու վառելանյութի մատակարարումը խաղաղ բնակչությանը: Վրաստանում ընդդիմադիր մամուլը գրաքննության է ենթարկվում, քաղաքական հակառակորդները հետապնդվում են, իսկ կասկածելիները՝ տանջվում ոստիկանության կողմից:

Բոլոր նորաստեղծ պետություններն էլ օգնություն են հայցում մեծ հեղինակություն վայելող այնպիսի ընկերություններից ու կազմակերպություններից, ինչպիսիք են Միջազգային վալյուտային հիմնադրամը, Համաշխարհային բանկը և Վերակառուցման ու զարգացման եվրոպական բանկը:

Ճիշտ է, Արևմուտքը չդետք է բաց թողնի այս հնարավորությունը: Նա չդետք է մտածի, որ Ալիևն, օրինակ, իր անցյալի հետևանքով ի վիճակի չէ հարգել մարդկային իրավունքները: Լինելով գործնական քաղաքագետ, նա գուցե ավելի լավ կարողանա դաշտպանել այդ իրավունքները, քան նախկին նախագահ Էլչիբեյը, որն այդպես էլ չկարողացավ կառավարել երկիրը: Ալիևը շատ լավ է գիտակցում, որ մեծ սպասական զարգացման համար երկիրը կարիք ունի արևմտյան ներդրումների:

Դեմիրելի և Ալիևի ծանոթությունը մոտ 25 տարվա վաղեմություն ունի, ի տարբերություն իր նախորդի՝ Օզալի: Ասում են, թե Դեմիրելը գերադասում է Ալիևի գործնական քայլերն Էլչիբեյի նրազային իդեալիզմից: «Օզալը նույնպես նրազկոտ մարդ էր, մինչդեռ Դեմիրելը խիստ գործնական և նույնիսկ դատեհաղաշտ է», ասում է արտաքին քաղաքականության մասնագետ դրոֆ. Այդին Յալչընը:

Արտգործնախարարության դաշտոնական աղբյուրներ նշում են, որ ոչ ռուսներ, ոչ էլ իրանցիներ չէին համակրում Էլչիբեյին: «Հայտնի չէ, թե ներկայումս Ռուսաստանի և Ալիևի միջև սիրային որեւէ կապ կա, թե ոչ, բայց դարզ է, որ Ալիևը չի դառնա խաղալիք ռուսների ձեռքին: Նա շատ փորձառու է և գիտե, թե Ռուսաստանն ինչ ունի և ինչ կարող է անել», շարունակում են նույն աղբյուրները:

Այս տեսակետը խիստ քննադատվում է թուրքական մամուլի կողմից, որը մեղադրում է սեփական կառավարությանն Էլչիբեյին բիկունք չկանգնելու համար: Նրանք հավատացած են, որ այդ ամենը խաղ էր Կովկասում Ռուսաստանի տիրապետությունը վերահաստատելու նդատակով:

«Ռուսների գլխավոր նդատակն է ցույց տալ շրջանում կարգ ու կանոն հաստատելու Թուրքիայի անկարողությունը», ասում է դրոֆ. Յալչընը: Որոշ մեկնաբաններ Ռուսաստանի և Թուրքիայի հակամարտությունը բացատրում են երկրաքաղաքական շահերի տեսանկյունից: «Մեր շահերը դահանջում են, որ այս շրջանը դառնա բուֆերային գոտի», ասում է Թուրքիայի արտաքին քաղաքականության ինստիտուտի տնօրեն Սեյֆի Թաշանը, իսկ նրանք ցանկանում են այն դարձնել առաջնային բազա»: Ոմանք գտնում են, որ ռուսները դիտավորյալ բաշալերում են դարաբաղյան հարցի շուրջ Ադրբեջանի և Հայաստանի միջև եղած հակամարտությունը, որդեսզի այդդիսով ամրադնդեն իրենց դիրքերը շրջանում: Նոր դաշտոնական անձնավորությունները համաձայն են այս տեսակետին, սակայն նրանք զգույշ են իրենց արտահայտություններում, հատկապես երբ հարցը վերաբերում է Ելցինի կառավարությունը մյուսներից տարբերակելուն: «Երբ մենք խոսում ենք Ռուսաստանի մասին, մենք դետք է հստակեցնենք, թե ո՞ր Ռուսաստանը նկատի ունենք, նշում է արտգործնախարարության մի աշխատակից, ես համոզված եմ, որ Ելցինի կառավարությանը ձեռնտու չէ գրգռել իրադրությունը Կովկասում, որով հետև դա կհակասի նրա որդեգրած ժողովրդավարական քաղաքականությանը: Բայց Ռուսաստանում կան նաև ուրիշ ուժեր՝ բանակը, ՊԱԿ-ը, դատեհաղանողականները, որոնք այլ կերդ են մտածում և դեռ չեն համակերդվել նոր իրականությանը»:

The Christian Science Monitor,
22 հուլիս, 1993

Մարդու իրավունքների նկատմամբ հարգանք դահանջելու լավագույն դրդադատճառը

Դոստֆակտում գործակալության թղթակցի հարցերին դատասխանում է Ռուսաստանի փոխարտգործնախարար Բորիս Պասուխովը: Հարցազրույցը կայացել է Ազիր քաղաքի օդանավակայանում:

– **Ինչդե՞ս է իրադրությունը աբխազա-վրացական հակամարտության գոտում:**

– Հրադադարի ռեժիմը հիմնականում դահպանվում է, թեև առանձին խախտումներ են դիտվում դիմակայության որոշ հատվածներում, հիմնականում գոտու խորքում: Ամենագլխավորն այն է, որ այժմ գործնական աշխատանք է սկսվում Աբխազիայի հակամարտության կարգավորման առնչվող հուլիսի 28-ի համաձայնագրի կատարման ուղղությամբ: Ես այդ աշխատանքը բացառիկ կարևոր եմ համարում:

– **Կարո՞ղ եք արդյոք դարզաբանել, թե հատկապես որն է այդ աշխատանքի կարևորությունը:**

– Նախ և առաջ ստեղծվում են ժամանակավոր եռակողմ վերահսկիչ խմբեր: Դրանցում աբխազական, վրացական և ռուսական կողմերի զինվորական ներկայացուցիչներն աշխատում են համատեղ և ուղղակիորեն կազմված են զոմարտակների, դիվիզիաների հետ և այլն: Խմբերի մեջ կա 3-9 մարդ: Մի շարք բնակավայրերում, որոնց շուրջ տեղի էին ունեցել ուժգին մարտական գործողություններ, հիմնականում Գումիստա գետի երկայնքով, դրանք արդեն սկսել են գործել: Նշեմ, որ դիտորդներն իրավունք ունեն ճեկնել հակամարտության գոտու որեւէ մաս, հանդիդում ունենալ որեւէ մեկի հետ, իսկ բնակչությանը նրանք դարզաբանում են իրենց դարտականությունները: Այնուհետև հանձնաժողովի աշխատանքում կներգրավվեն ՄԱԿ-ի, ԵԱՀԽ-ի ներկայացուցիչներ, հավանաբար այն մարդկանցից, որոնք Թբիլիսիում ներկայացրել են այդ կազմակերպությունները:

Հանձնաժողովի աշխատանքների շրջանակը չափազանց լայն կլինի: դրանք կազմված են նաև ճանապարհների ականազերծման, երկաթուղային երթևեկության բացման, փախստականների վերադարձի հետ: Բայց ամենագլխավորն այն է, որ հաստատվի կայուն հրադադար և շուտափույթ կերդով ժամանեն միջազգային դիտորդներ: Մենք ակնկալում ենք, որ Անվտանգության խորհուրդն արդեն այս շաբաթ որոշում կընդունի հակամարտության գոտի միջազգային դիտորդներ բերելու մասին և առաջին խումբը կժամանի արդեն եկող շաբաթ: Իսկ այնուհետև հարկ կլինի համաձայնագիր կնքել լիաժավալ կարգավորման վերաբերյալ:

– **Եթե այդ ձեռնարկումը հաջող ավարտվի. Ձեր կարծիքով այն կկարողանա՞ արդյոք նպաստել Կովկասի մյուս թեժ կետերում հակամարտությունների կարգավորմանը:**

– Կովկասյան հանրապետությունները յուրօրինակ հաղորդակից անոթներ են, և նրանց խնդիրները մեկից անցնում են մյուսին: Ես միանգամայն համոզված եմ, որ եթե Աբխազիայում հաջողվի կրակը մարել, առա դա բարենդաստ կերդով կանդրադառնա նաև Հարավային Օսիայի, Լեռնային Ղարաբաղի հակամարտությունների կարգավորման վրա: Ես չեմ հավատում առանձին բաշխագնեների հոռետեսությանը և հուսով եմ, որ աբխազական և վրացական կողմերի համաձայնության հասնելն օրինակ կծառայի մյուս հակամարտ ժողովուրդների համար: Ի դեդ, Վրաստանում անցկացված հանրային կարծիքի հարցումները նաև ցույց են տալիս, որ բնակչությունը հավանություն է տալիս այդ ձեռնարկմանը:

– **Դուք ինչդե՞ս կընութագրեք Ռուսաստանի կառավարության դերն Աբխազիայի հակամարտության կարգավորման մեջ:**

– Այդ հակամարտության կարգավորման խնդիրը Ռուսաստանի նախագահն ու կառավարությունը ճշդաղես դահում են իրենց տեսադաշտում և, հավատացեք, արդեն լոկ խոսքեր չեն: Նախագահի, կառավարության ուշադրության օրինակներ են, թե նախագահը ինչդիսի օդերատիվությամբ որոշում ընդունեց Սերգեյ Հոյգային միացյալ հանձնաժողովի ռուսական խմբի դեկավար նշանակելու մասին, և թե այն, որ երկու օրում դատրաստվեց որոշման նախագիծ Աբխազիայում հրադադարի համաձայնագրի կատարման միջոցառումների մասին: Ես գիտեմ, որ Ռուսաստանի տարբեր գերատեսչություններին տրված են մի ամբողջ շարք կարևոր հանձնարարություններ, որոնք կապված են այդ ձեռնարկման հետ: Մի խոսքով, Աբխազիայի հակամարտության կարգավորման բափանիվն արդեն դտտվում է և արագացնում ընթացքը:

ՆՏ.

Բորիս Պասուխով. Աբխազիայի հակամարտությունը կկարգավորվի

– Հարգանքով՝ ինչ-որ մի բան դարտադրելու մասին: Դրանք ինչդես դարտադրանք չեն, դրանք դարտադրանք չեն: Դրանք դարտադրանք չեն: Դրանք դարտադրանք չեն:

Դրվագներ

Ռաֆայել Եդոյան. ՀԱՄՈԶՎԱԾ ԵՄ, ՈՐ ԿԳԱՆ ԼԱՎ ԺԱՄԱՆԱԿՆԵՐ

Երկրաշարժից հետո ծանր ժամանակներ ապրեց շուրջ 3000 ուսանող ունեցող Վանաձորի մանկավարժական ինստիտուտը, որը 1988-89-ին իր հարկի տակ էր ընդունել Ստեփանակերտի մանկավարժականի շուրջ 1000 դասախոսների եւ ուսանողների: Բացվեցին նոր բաժիններ՝ հաշվի առնելով Լեռնային Ղարաբաղի դպրոցները (մասնաճուղի բազայի վրա առաջացավ ստեղծվեց Ստեփանակերտի համալսարանը):

Սկզբնական շրջանում ստեղծվեցին վրանային լսարաններ, որոնք չէին կարող երկար ժամանակ ապահովել ուսուցման գեթ նվազագույն պահանջները: 1989-ին կառուցվեցին տնակային լսարաններ, որոնցում սկսվեց նոր ուսումնական տարին: Ուսումնառության բնականոն ռիթմը պահպանվեց, չնայած բոլոր դժվարություններին: Ինստիտուտին անհրաժեշտ է նոր համալիր, սակայն ներկա տնտեսական ծանրագույն պայմաններում նրա ճակատագիրը մնում է անորոշ:

Այս բոլոր իրադարձությունների ու դժվարությունների կիզակետում է եղել ինստիտուտի տեկնոր, դոկտոր, պրոֆեսոր Ռաֆայել Եդոյանը: Նրան խնդրեցինք պատասխանել մի քանի հարցի:

– Պարոն Եդոյան, ի՞նչ հեռանկարներ կան ստեղծված անորոշությունից դուրս գալու, մեր տարածաշրջանի մանկավարժական միակ պետական բուհի համար անհրաժեշտ պայմաններ ստեղծելու համար:

– Սկզբում հույսեր էինք փայփայում, որ մեզ կհատկացվի նոր տարածք, որին համապատասխան կտեղայնացվեն եղած նախագծերը: Սակայն հանրապետության կառավարությանը, տարբեր գերատեսչություններին ուղղված մեր բոլոր դիմումները մնում են անպատասխան: Սփռված այլ ելքեր ենք որոնում: Վարված մասնաշենքերի լրացուցիչ տեղազննությունից հետո արդեն պատվիրել ենք դրանց հիմնավոր ամրացման նախագծերը: Միջոցներ հայթայթելուց հետո կսկսենք ամրացումը: Որոշ հույսեր ենք կապում մեր քաղաքի եւ հարեւան շրջանների իշխանությունների հետ, իսկ հիմնականում մեր միակ հույսը բարեգործներն են: Արդեն նախնական պայմանավորվածություն կա ինստիտուտի մեր տարածաշրջանում եւ հանրապետությունից դուրս բնակվող գործարար շրջանավարտների հետ, ովքեր խոստացել են գումարներ հատկացնել այդ նպատակով:

– Անտարակույս, վթարված շենքերի ամրացումը տարիների հարց է: Ի՞նչ միջոցներ են ձեռնարկվում պարապմունքները նորմալ անցկացնելու համար:

– Արդեն բավականաչափ վառելափայտ ու սոլյարայուղ ենք ձեռք բերել, պատվիրել լրացուցիչ վառարաններ լսարաններ տանելու համար: Այնպես որ, այս ձմռան նույնպես ուսումնական գործը չի խաթարվի: Մանավանդ որ վերջերս քաղաքորդի օգնությամբ լուծվել է ճշգրտական էլսնուցման հարցը եւ նոր ուսումնական տարում այդ խնդիրը կվերանա: Այդուհանդերձ, ցավալի է, որ հատկապես հաշվողական տեխնիկայի կարիքները բերահագեցված են համարյա:

Բուհը պետք է դառնա գիտության զարգացման այն համալիրը, որն իր շուրջը կհամախմբի մասնագիտական ուսակայ մասնագետների կարգիչներով, որը բացասաբար է անդրադառնում լիարժեք ուսուցում կազմակերպելու վրա:

– Ո՞րն եք համարում ձեր գերխնդիրը:

– Բազմաստիճան ուսուցման անցնելը, ուսումնական պլանների կատարելագործումը, որի օգնությամբ ինստիտուտը կվերածվի համալսարանի: Այս հարցն արդեն մեկնարկվել է քաղաքորդի կրթության, գիտության եւ մշակույթի հանձնաժողովում, արժանացել հավանության: Մնում է կատարել հաջորդ, ավելի գործնական քայլերը:

Բուհը պետք է դառնա գիտության զարգացման այն համալիրը, որն իր շուրջը կհամախմբի մասնագիտական ուսակայ մասնագետների դիմումներ, փաստ է, եւ պետք է կատարելագործել այն: Սակայն ես այն կարծիքին եմ, որ մեր ինստիտուտում միշտ էլ շնորհալի դիմորդներ մեծ մասամբ հաջողության են հասել: Չեմ կարող լիովին համաձայնել ձեր կարծիքին՝ վերջին տարիների վերաբերյալ, քանզի այդ ընթացքում ոմանք են դարձել նաեւ բավականին բույլ դիմորդներ:

Ես ցիշ չեմ համարում օբյեկտիվության «բեռն» ամբողջովին երեւանից ժամանող ֆիզիկան հանձնաժողովների նախագահներին վերագրելը:

Քաղաքային առարկայական ֆիզիկան հանձնաժողովները նույնպես ի վիճակի կլինեն պատշաճ մակարդակով անցկացնել ընդունելության ֆիզիկաները: Պետք է վերահսկել նրանց եւ պահանջել անհրաժեշտ արդյունքներ, որն ավելի կբարձրացնի պատասխանատվության զգացումը:

Կա մի առաջավոր երեւույթ, որը նույնպես ազդում է օբյեկտիվության վրա: Ի տարբերություն անցած ժամանակների, այժմ, երբ ողջ պատասխանատվությունը դրված է մայրաքաղաքային հանձնաժողովների վրա, չի վերահսկվում դիմորդների հետ մասնավոր պարապմունքների մասնակցությունը ընդունելության ֆիզիկաներին, որի հավանականությունն ավելի մեծ է հասկանալի փոքր քաղաքներում:

Երբ տուկայական հարաբերություններում խեղդվում է ձգտումը ուսման նկատմամբ, պետք է բուհ ընդունվեն միայն արժանավորներ:

Այս տարի ՀՊՃՀ-ի Վանաձորի մասնաճյուղում 210 տեղի համար (105-ը պետական պատվերով) դիմել են ընդամենը 110 դիմորդներ: Իսկ մանկավարժականում՝ 325 տեղի համար (200-ը պետական պատվերով) դիմել են 740-ը: Դիմորդների թիվը մեզ մոտ 200-ով պակաս է անցած տարվանից:

Ցավալին այն է, որ նվազել է գյուղերից եկած դիմորդների թիվը: Բնականաբար կնվազի նաեւ գյուղի ուսանողների թիվը: Չնայած, որպես կանոն, նրանք որոշ ժամանակ անց ավելի որակյալ ուսանողներ են դառնում: Դա պայմանավորված է նաեւ նրանով, որ քաղաքի դիմորդների մեծ մասը պարապում է մասնավորների մոտ, որոնք ոչպակի վարձեցնում են դիմորդին ինքնության հանձնելու համար, անկախ նրա բնատար բնությունից: Իսկ գյուղերում այս երեւույթը գրեթե բացառվում է: Երեւի արժե մտածել նաեւ գյուղից եկած դիմորդներին որոշակի արտոնություններ տալու մասին, բնական ընդունելությունը կատարելով նրանց բնդհանուր թվերի հաշվին: Այս դեպքում նաեւ կատարած կլինենք կրթության առջեւ դրված մեր գերխնդիրը՝ նպաստելով մասնակցությունների բացահայտմանը եւ ինտելեկտուալ կարողությունների կատարելագործմանը:

ՍՄԲԱԴ ՍԻՄՈՅԱՆ
Մեր անձ. թղթակից, Վանաձոր

Ուսուցանի նախագահ Բորիս Եղցինը ստացել է «Մեծագործ արիության համար» մեդալով Դրսի ապին Օտիայի եւ Ինգուշիայի մասնակցությամբ վարչակարգի դեմ տեղի Պոլյանիչկոյին նվիրուած ոգեկոչման հուշամատյանը: Այստեղ հանձնարարվում, ինչպես հարգելի են նախագահի մասնակցությունից յոթնամսյա օր, զինվորական եւ ծառայողական պարտքը կատարելու համար «Մեծագործ արիության համար» մեդալով նվիրուած ոգեկոչման հուշամատյան են դեռեւս կորեցին եւ ավազ լեռնանցքում Կռվյունը: «Հիշատակության համար» մեդալով պարգեւատրվել են կրտսեր սերժանտ Կոլեսնիչենկոն, կրտսեր լեյտենանտ Կոնդրատեւը, շտաբային Սկաչոգուբովը, որոնք ուղեկցում էին Պոլյանիչկոյին այդ օր: ԻՆ

Տեղեկատվություն

Ցավոք, Հայաստանի փաստացի մեկուսացվածությունը ամենամոտ եւ ամենամեծ՝ Ռուսաստանի տուկանեղիցի խարդանքների, ծառայությունների, ֆինանսների) բացասական ազդեցություն է թողնում մեզանում ֆոնդային տուկայի կենսագործունեության եւ զարգացման վրա: Թեեւ ուրիշ զոտում ենք գտնվում (դեռեւս), օբյեկտիվ պայմանները թույլ չեն տալիս մեզ ներգրավվել տուկայի ակտիվ շրջադույթի մեջ:

Ռուսաստանյան արժեթղթերը մի զանում դժգոհություն չեն վայելում (ներկայացված են «Ինկոռոս» ֆինանսաարդյունաբերական խմբի, «Սոլիցա» միջազգային առեւտրական տան, «Պերամիդայի», «Ինկոմբանկի», Ռուսաստանյան մրցային բաստայի եւ այլ արժեթղթերը):

Օտարերկրյա կապիտալը, ավելի հուսալի եւ կայուն վայրեր փնտրելով, չի շտապում խարիսխ գցել հայաստանյան տուկայում: Փոխարենը ՌԴ Կենտրոնական բանկի վերջին ակցիայից հետո, ինչպես եւ կանխատեսելի էր, Հայաստան են հոսում «զոյություն չունեցող» դեպքերի 1991-1992 թթ. դրամանիշները: Գործադրելս մեծ ակտիվություն ունեցավ այս գործընթացում երբայրական Վրաստանի կողմից: Վրաց «ինտերվենտները», շտապելով բազմիցս վարկաբեկված ռուբլիները փոխանակել հեղինակավոր դոլլարով, դրանով իսկ խթանում են վերջինիս կուրսի բարձրացումը հայաստանյան տարադրամային տուկայում, ավելի արժեզրկում «հայաստանյան» ռուբլին, առաջացնելով գների նոր թռիչք եւ տուկայի բեկուզ չնչին կայունության խախտում: Մինչդեռ Ռուսաստանի տարադրամային դրամատեղում ռուբլին (նորը) շարունակում է կայունացման միտումներ դրսեւորել, այսինքն, բարձրանալ դոլլարի համեմատությամբ:

Սակայն որոշ փորձագետներ ամբողջ տնտեսության, այդ թվում եւ ֆոնդային տուկայի ակտիվությունը կապում են հանրապետությունում տպասվող սեփականաշնորհման հետ: Հենց այս գործոնն է, որ լցրեց Ռուսաստանի տուկան սեփականաշնորհման չեկերով (վաուչերներով) եւ սեփականաշնորհված ձեռնարկությունների բաժնետոմսերով ու այլ արժեթղթերով:

«Վաուչերիզացիան» կյանքի կոչեց նորերը եւ խթանեց արդեն ստեղծված բաժնետիրական ընկերությունները: Հանձինս սեփականաշնորհման չեկերի ոլորտյան կողմից երաշխավորված ինվեստիցիաների աղբյուր տեսնելով, շատ ձեռնարկություններ առաջացրին անցումը բաժնետիրության: Ակտիվացան ինվեստիցիոն ֆոնդերը:

Ռուսաստանի օրինակով մեզանում նույնպես բուռն է հավաքում ինվեստիցիոն հիմնադրամների ձեւավորումը: Վկայությունը մեկը մյուսից էապես չտարբերվող տոկոսներ խոստացող ամենատարբեր ֆիրմաների ակտիվացումն է: Ըստ երեւույթին հենց ձեւավորվող ինվեստիցիոն հիմնադրամներն են լինելու առաջա տուկայի հսկաներ:

Իսկ մինչ այդ փորձագետները մատնանշում են մեր ֆոնդային տուկայի զուտ մի քանի հատվածների փոքրիշատե աշխուժությունը: Այդ առնչությամբ հիշատակվում են Ամերսարժ գույքի եւ արժեթղթերի հայկական բորսան, «Էներգան» բաժնետիրական ընկերությունը, Ագրոարդրամատունը եւ այլն:

Տեղի են ունեցել մի շարք բաժնետիրական ընկերությունների համաժողովներ, որտեղ հայտարարված շահաբաժինները կազմել են 70-180 տոկոս:

Հաշվի առնելով տնտեսական եւ քաղաքական իրավիճակը հանրապետությունում եւ շրջանում, պետք է ընդգծել, որ նման շահաբաժիններ ապահովելու հանգամանքը հուսադրող է եւ խոսում է ֆոնդային արժեքների առողջ տուկայի ձեւավորման օգտին: Ամեն դեպքում, ինչպես ասում են, հուսանք եւ աղաչենք սեփականաշնորհմանը:

ՄԱՐՍ ԲԵԿՅԱՆ

Լուր

Խաբարովսկի երկրամասում աշխատավարձերի խզումը մեծացել է

Խաբարովսկի երկրամասում բանվորների ու ծառայողների միջին աշխատավարձն առաջին կիսամյակում ավելացել է 3,4 անգամ, մինչդեռ նույն ժամանակամիջոցում սպառողական գների ազատ ինդեքսն աճել է 4,5 անգամ:

Վիճակագրության երկրամասային վարչության տվյալների համաձայն, հունիսին մեկ աշխատողի միջին աշխատավարձը կազմել է 76243 ռուբլի: Ընդսմին, ավիացիոն տրանսպորտի աշխատողները միջին հաշվով ստացել են 152,5 հազար ռուբլի, երկաթուղային տրանսպորտի՝ 115,4 հազար ռուբլի: Բանկերի, ապահովագրական ընկերությունների աշխատակիցների աշխատավարձը կազմել է միջին հաշվով 150 հազար ռուբլի, իսկ հաշվի առնելով սոցիալական վճարումները, նրանց եկամուտը հունիսին կազմել է 252,5 հազար ռուբլի:

Աշխատողների մյուս խմբերը ուրիշ կերպ են վարձատրվում: Այսպես, ձկնաճանաչության մեջ հունիսին աշխատավարձը չէր անցնում 41,3 հազար, անտառային տնտեսության մեջ՝ 50,1 հազար ռուբլուց: Խորհրդատվությունների բանվորները միջին հաշվով վաստակում էին 56 հազար ռուբլի, իսկ գիտության, մշակույթի եւ արվեստի աշխատողները՝ 51 հազարից ոչ ավելի: ԻՆ

Երեւանի իրավագիտության եւ մենեջմենտի «Գալիլ» ինստիտուտը հայտարարում է 1993-94 ուս. տարվա ընդունելություն

Ինստիտուտը պատրաստում է բարձրագույն կրթության միջազգային չափանիշների համապատասխան իրավագիտության եւ մենեջմենտի բարձրակարգ մասնագետներ:

Իրավագիտության ֆակուլտետի շրջանավարտները կստանան իրավագիտության բակալավրի կոչում եւ կարող են աշխատել սեփականության տարբեր ձեւերի գործող ձեռնարկություններում եւ այլ կազմակերպություններում, արտաքին եւ ներքին տնտեսական հարաբերությունների եւ այլ բնագավառներում, դատախազության, դատական, պետական իշխանության եւ կառավարման մարմիններում:

Ֆակուլտետում կազմակերպվել է դիպլոմավորության բաժին: Այս մասնագիտության շրջանավարտները կստանան միջազգային հարաբերությունների անհատական ատաստանագրեր հանրապետության համար անհրաժեշտ գիտելիքներ:

Մենեջմենտի ֆակուլտետի շրջանավարտները կաշխատեն արտադրության կազմակերպման եւ կառավարման, աշխատանքի գիտական կազմակերպման, մարկետինգի, ապրանքագիտության եւ մասնակցության կազմակերպման, ֆինանսավարկային, մասնավոր ձեռնարկատիրական գործունեության եւ տնտեսական կյանքի այլ բնագավառներում:

Այս ուսանողներից կազմակերպվել է «Միջազգային տնտեսական հարաբերություններ» բաժին: Այդ մասնագիտության շրջանավարտները կստանան հաշվապահության գիտելիքներ աշխարհի ազատ գների եւ տնտեսական հարաբերություններ ձեւավորելու, կազմակերպելու եւ զարգացնելու առարկաներում:

Ինստիտուտում կազմակերպված է արտադրությունից կտրված, ազատ ունկնդիրների ուսուցում անհատական գրաֆիկով:

Դիմորդներն ընդունելության քննություններ են հանձնում հետեւյալ առարկաներից.

Իրավագիտության ֆակուլտետում հայոց լեզու (թելադրություն), հայոց պատմություն (բանավոր), օտար լեզու (բանավոր)

Մենեջմենտի ֆակուլտետում հայոց լեզու (թելադրություն), մաթեմատիկա (բանավոր), օտար լեզու (բանավոր):

Ընդունելությունն անց է կացվում մրցութային կարգով:

Միջնակարգ դպրոցը ոսկի կամ արծաթե մեդալով եւ միջնակարգ մասնագիտական հաստատությունները գերազանցության դիպլոմով ավարտածներն ինքնաբերաբար կընդունվեն հարգալոյցով:

Մրցույթից դուրս կարող են ընդունվել արտերկրից գործուղվածներ, բանակում կամ ինքնապաշտպանության ջոկատներում ծառայած մարտիկներ:

Ինստիտուտն անվճար 10 տեղ է հատկացնում ազգի գոյատեւ ծնողազուրկ երեխաներին, զոհված ազատամարտիկների երեխաներին եւ վիրավորված ազատամարտիկներին:

Դիմորդները ներկայացնում են հետեւյալ փաստաթղթերը.
- դիմում ինստիտուտի տեկնորի անունով
- միջնակարգ կամ միջնակարգ մասնագիտական կրթության վկայական (բնագիր)
- ինքնությունը հաստատող փաստաթուղթ
- տեղեկանք առողջական վիճակի մասին (թիվ 086 ձեւ)
- վեց լուսանկար (3x4 չափի)

Փաստաթղթերի ծանոթացման եւ ընդունելության քննություններին մասնակցելու համար դիմորդը պետք է ինստիտուտի դասարանի մոտի 1500 ռ., որը անկախ քննություններ արդյունքից, եւ չի վերադարձվում:

Ուսման մեկ տարվա վարձը կազմում է 80 000 ռուբլի:

Դասական կուրսի էական փոփոխության դեպքում ինստիտուտն իրեն իրավունք է վերապահում ուսումնական տարվա ընթացքում փոխել ուսման վարձի գումարի չափը: Ուսման վարձը կարելի է մուծել կանխիկ կամ փոխանցումով:

Փաստաթղթերն ընդունվում են օգոստոսի 1-25-ը:

Ընդունելության քննությունները՝ օգոստոսի 25-31-ը:

Բարձրագույն կրթություն ունեցող անձինք ազատ ունկնդիրների բաժնում կարող են հետաքրքրվել ուսումնական տարվա ընթացքում:

Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել ընդունող հանձնաժողովին:
Մեր հասցեն. Երեւան Բոչարի 12/1, Լաս-Վեգաս անվան թիվ 14 դպրոց
(«Հորիզոն Մենեջմենտ» կազմակ.) Հեռախոս. 55-07-70, 57-32-60, 55-58-78

Հուսանք եւ սպասենք սեփականաշնորհմանը

Տնտեսություն

Ռուսաստանի տուկան սեփականաշնորհման չեկերով (վաուչերներով) եւ սեփականաշնորհված ձեռնարկությունների բաժնետոմսերով ու այլ արժեթղթերով:

«Վաուչերիզացիան» կյանքի կոչեց նորերը եւ խթանեց արդեն ստեղծված բաժնետիրական ընկերությունները: Հանձինս սեփականաշնորհման չեկերի ոլորտյան կողմից երաշխավորված ինվեստիցիաների աղբյուր տեսնելով, շատ ձեռնարկություններ առաջացրին անցումը բաժնետիրության: Ակտիվացան ինվեստիցիոն ֆոնդերը:

Ռուսաստանի օրինակով մեզանում նույնպես բուռն է հավաքում ինվեստիցիոն հիմնադրամների ձեւավորումը: Վկայությունը մեկը մյուսից էապես չտարբերվող տոկոսներ խոստացող ամենատարբեր ֆիրմաների ակտիվացումն է: Ըստ երեւույթին հենց ձեւավորվող ինվեստիցիոն հիմնադրամներն են լինելու առաջա տուկայի հսկաներ:

Իսկ մինչ այդ փորձագետները մատնանշում են մեր ֆոնդային տուկայի զուտ մի քանի հատվածների փոքրիշատե աշխուժությունը: Այդ առնչությամբ հիշատակվում են Ամերսարժ գույքի եւ արժեթղթերի հայկական բորսան, «Էներգան» բաժնետիրական ընկերությունը, Ագրոարդրամատունը եւ այլն:

Տեղի են ունեցել մի շարք բաժնետիրական ընկերությունների համաժողովներ, որտեղ հայտարարված շահաբաժինները կազմել են 70-180 տոկոս:

Հաշվի առնելով տնտեսական եւ քաղաքական իրավիճակը հանրապետությունում եւ շրջանում, պետք է ընդգծել, որ նման շահաբաժիններ ապահովելու հանգամանքը հուսադրող է եւ խոսում է ֆոնդային արժեքների առողջ տուկայի ձեւավորման օգտին: Ամեն դեպքում, ինչպես ասում են, հուսանք եւ աղաչենք սեփականաշնորհմանը:

ՄԱՐՍ ԲԵԿՅԱՆ

digitised by A.R.A.R.@

Բալկաններ

ՄԻԼՈՇԵՎԻՉԸ ՆՎԱՍՏԱՑՆՈՒՄ Է ԱՐԵՎՄՈՒՏՔԻՆ

«Սերբիայի նախագահ Սլոբոդան Միլոշեւիչը միջազգային հանրության աչքին նախկին Հարավսլավիայի արյունալի ողբերգության գլխավոր ոճրագործն է: Աշխարհի առջեւ ոճրավարկված Միլոշեւիչը, անշուշտ, կհասնի իր նպատակին՝ Մեծ Սերբիայի ստեղծմանը, բայց դա տեղի կունենա սեփական ժողովրդի աղետալի կյանքի գնով»: Այս կարծիքն է հայտնում Ֆրանսիական «Le Point» հանդեսը, որից բարգմանաբար ներկայացնում ենք այս նյութը:

Բալկանների տառապյալ գոտում:

Այս իմաստով Սլոբոդան Միլոշեւիչը Հարավսլավիայի քաղաքացիական ոճրագործի հաղթողն է, նույնիսկ երբ հաղթանակը ձեռք է բերվել նախկին Հարավսլավիայի մյուս ժողովուրդների մեծամասնության եւ մասնավորապես բոսնիացիների ողբերգության գնով, ինչպես նաեւ սեփական ժողովրդի տնտեսական աղետի եւ անոյտության գնով, որից նա երկար ժամանակ չի կարողանա ազատվել:

Սակայն միայն սերբերը չէ, որ կրելու են ոճրագործության դատապարտման ծանր բեռը: Միջազգային ընկերակցությունը իր հերթին եւ մասնավորապես Եվրահամայնքը ցուցաբերեց իր անկարողությունը այն խնդիրների լուծման հարցում, որոնք իր աչքարհագրական տարածքում հայտնվեցին կոմունիզմի հանկարծակի անհետացման հետեւանքով:



որոնք նա հավակնում էր ոճրագործել: Այս ոճրագործով Եվրոպայի տնտեսական միավորումը երկար ժամանակով հեղինակազրկվեց:

– Հրամանատարական դժվարությունները, պարտավորության հնարավորությունը՝ թվենք Արեւմուտքի սխալներից մի քանիսը:

– Արեւմուտքը տատանումներ ունեցավ անհրաժեշտ, այդ թվում ռազմական միջոցներ այն մեծ սկզբունքներին ծառայեցնելու հարցում, որոնք նա հավակնում էր ոճրագործել: Այս ոճրագործով Եվրոպայի տնտեսական միավորումը երկար ժամանակով հեղինակազրկվեց:

– Հարավսլավիայի ամբողջ ճգնաժամի ընթացքում ԱՄՆ-ի հանդես բերած զգուշավորությունը, անոյտություն վարանումներ, իսկ այնուհետեւ նրա խաղացած անորոշ խաղը բավական վատ ոճրագործում ստեղծեցին այն նոր աշխարհակարգի վերաբերյալ, որը կոմունիզմի փլուզումից եւ Պարսից ծոցի ոճրագործից հետո Ամերիկան խոստացել էր ամբողջ աշխարհին: Սերբիայի նախագահ Սլոբոդան Միլոշեւիչը կարողացավ շահագործել ոմանց ոճրագործությունից, մյուսների անճարակությունից կամ երկիմաստ խոսքերից եւ ամենի վարանումներից, որոնցից վերջինս ձեռք առնի համաշխարհային ընկերակցությանը: Կանոնավորապես ձեւացնելով, թե իմը գիջումներ է անում, Սերբիայի նախագահը անկարեւոր կետերում տեղի տալով, երբեք չհրաժարվեց իր գլխավոր նպատակից եւ ի վերջո ոչ միայն հաղթանակ տարավ, այլեւ նվաստացրեց Արեւմուտքին:

Մնում է հուսալ, որ ժողովուրդների ինքնորոշման իրավունքի բուն գաղափարին հասցված այս վիրավորանքը, ամենաանհանդուրժողական ցեղասպանության այս ծայրահեղությունը, ուժին տրված այդ տուրքը չեն ուժեղացնի բոլոր նորահայտ բռնապետների ու նվաճողների նկրտումները: Երկրորդ աշխարհամարտի ավարտից հետո առաջին անգամ ազգայնամոլությունն առաջին անգամ բացահայտ հաղթանակ է տանում:

Le Point, 30 հուլիս 1993

Վաշինգտոն

ԱՄՆ-ը կոչ է անում կրճատել միջուկային զինանոցը

ԱՄՆ-ի ատլանտյան խորհուրդը տարածել է զեկուցագիր, որով միջուկային տերություններին կոչ է արվում արմատապես կրճատել ռազմավարական միջուկային սպառազինությունների զինանոցները, բեռնուց մինչեւ դրանց լիակատար ոչնչացումը:

Առաջին փուլում առաջարկվում է Միացյալ Նահանգների եւ Ռուսաստանի միջեւ համաձայնության հասնել կողմերից յուրաքանչյուրի համար ռազմավարական եւ մարտավարական միջուկային մարտագլխիկների թիվը 1500–2000-ով սահմանափակելու մասին: Դրա համար նախ եւ առաջ հարկավոր է, որ խորհրդային բոլոր նախկին հանրապետությունները վավերացնեն START-I եւ START-2 պայմանագրերը եւ իրենց տարածքներից դուրս միջուկային բոլոր զենքերը տանեն Ռուսաստան:

Ատլանտյան խորհրդի փորձագետների կարծիքով, երկրորդ փուլում պետք է հինգ գլխավոր միջուկային տերությունները բազմակողմ համաձայնագիր ստորագրեն միջուկային սպառազինությունների ոլորտների կրճատման մասին, կողմերից յուրաքանչյուրին թողնելով 100–200 միջուկային մարտագլխիկից ոչ ավելի:

Երրորդ փուլում պետք է լիովին արգելվեն եւ ոչնչացվեն միջուկային սպառազինությունները: Այդ նպատակով զեկուցագրի հեղինակները կոչ են անում ստեղծել լրացուցիչ միջուկազերծ գոտիներ, արգելել միջուկային փորձարկումները, ոչնչացնել բոլոր վերգետնյա բալիստիկ հրթիռները, խոչընդոտել միջուկային զենքը չտարածելու ռեժիմը:

ԱՐՄԵՆՊՈՒՏ ԻՍԱՌ ՏԱՍՍ

Համաբարբարական հասարակական կենտրոնի նախագահ Չինգիզ Ագիալիևը, որին երկու ամիս առաջ ծեր բանալել էին առոչինարար զենք կրելու համար, կալանից ազատ է արձակվել նախքան դատը, որը նախատեսված է օգոստոսի 19-ին: ԻԴ

Մոսկվա

Տաջիկստանին ստիպում են երկխոսության նստել իր ընդդիմության հետ

Ռուսաստանը եւ ԱՊՀ կենտրոնասիական երկրները Մոսկվայում այսօր բաց վող հանդիպմանը ճնշում են գործադրելու Տաջիկստանի իշխանությունների վրա ընդդիմության հետ երկխոսություն ծավալելու նպատակով: Այդպիսի երկխոսությունը, միակ միջոցն է կարգավորելու իրավիճակն ինչպես Տաջիկստանում, այնպես էլ Աֆղանստանի հետ սահմանին:

գան Գարիբշո Շարոզովը հինգշաբթի Դուշանբեում հանդիպել է Տաջիկստանի Գերագույն խորհրդի նախագահ Էմոմալի Ռահմոնովի հետ: Հանդիպումը տեղի է ունեցել փակ դռների ետեւում: Մանրամասնություններ հայտնի չեն: Հինգշաբթի օրը Տաջիկստանի արտգործնախարարությունը հանդես է եկել հայտարարությամբ, որում ասվում է, որ Տաջիկստանի ղեկավարությունը երբեք չի բացառել հարցի խաղաղ կարգավորման հնարավորությունը:

Փաստաթղթում նաեւ նշվում է, որ Լեռնային Բաղախշանի իշխանությունների համաձայնությամբ սկսած Դուշանբե-Խորոգ ավտոճանապարհի խարխուլ-խարխուլ հատվածն ընդդիմության գինված ջոկատներից ազատելու գործողությունները հաջողությամբ են ընթանում: Արտգործնախարարությունը հավատացնում է, որ կառավարական զորքերը չեն մտնի Լեռնային Բաղախշանի տարածք:

«Ազգ»

Փարիզ

Ֆրանսիացիները շարունակում են ապրել լավ եւ ուրախ

Անցած տասնամյակում Ֆրանսիայում տեղի ունեցան սոցիալ-տնտեսական եւ ժողովրդագրական փոփոխություններ, որոնց հետեւանքով փոխվեց Ֆրանսիական հասարակության կերպարը: Ընդ որում, փոփոխությունները շոշափեցին նաեւ Ֆրանսիացիների ապրելակերպն ու նրանց սովորությունները:

Համաձայն վիճակագրության ազգային ինստիտուտի հետազոտությունների, վերջին ութ տարվա ընթացքում գրեթե մեկ երրորդով կրճատվեց ֆերմերների եւ գյուղացիների թիվը եւ 7 տոկոսով բանվորների թիվը: Այդ ժամանակամիջոցում 40 տոկոսով աճեց ինժեներա-տեխնիկական եւ կառավարման աղարատում աշխատողների թիվը: Այսօր աշխատում է 30-ից 44 տարեկան կանանց 76 տոկոսը, երբ 1962 թվականին նրանք կազմում էին 40 տոկոսը:

Չնայած առաջադիմության բոլոր ձեւերումներին, ինչպես նաեւ նախկինում, 570 հազար ֆրանսիացիներ շարունակում են կանգնել կոնվեյերի մոտ: եւ եթե աշխատանքի պայմանները բարելավվել են մեծ ձեռնարկություններում, ապա փոքրերում ընդհակառակը վատթարացել:

Այնուամենայնիվ, ամբողջությամբ վերցրած, ֆրանսիացիների կենսամակարդակը եւ բարեկեցությունն աճում են: Մի ընտանիքին միջինը ընկնում է 3,8 սենյակ, իսկ դարի վերջին քառորդում յուրաքանչյուր երրորդ ընտանիք սեփական տուն է գնել: Ընտանիքների 95 տոկոսը հեռուստացույց ունի, 94-ը հեռախոս եւ 77-ը ավտոմեքենա:

Շարունակում է աճել կյանքի երկարաեւությունը: կանանց մոտ այն հասել է 81 տարուն, իսկ տղամարդկանց 73 տարի: Սակայն այդ երկարակեցությունը կախված է ոչ միայն սեռից, այլեւ մասնագիտությունից: Ուսուցիչը միջինը ութ տարի ավելի է ապրում, քան սեւագործ բանվորը: Ծնելիությունը երկում 1,8 երեխա է միջինը:

Կյանքի երկարաեւության աճը հանգեցրեց նրան, որ Ֆրանսիայում աճեց մահացությունը քաղաքացիական հիվանդություններից, որը այժմ կազմում է 28 տոկոս: Դրա գլխավոր պատճառներից մեկը ծխելն է: Երկրում գրանցված է 2025 սոիդով հիվանդ: Ընդհանուր առմամբ 200 հազար մարդ սոիդի բացիլակիր է:

Վերջին երկու տասնամյակում առաջին անգամ կրճատվեց ամուսնական զույգերի թիվը: Ավելի շատ ֆրանսիացիներ ամուսնական միության փոխարեն նախընտրում են ավելի նվազ ծանրաբեռնող ազատ միությունը: Գրեթե կրկնակի աճել է ամուսնալուծությունների թիվը, եւ եթե նման միտումը պահպանվի, առյահարզանով կավարտվի յուրաքանչյուր երրորդ ամուսնություն: Դրա արդյունքում գնալով շատանում է միայնակ մայրերի եւ հայրերի թիվը: Այդպիսի ընտանիքներում ապրում են 19 տարեկանից փոքր 2 միլիոն երեխա:

Փոխվում է ապրելակերպը, փոխվում են նաեւ սովորությունները: Այսօր ֆրանսիացին, ինչպես երբեք, ուշադրություն է դարձնում իր առողջության նկատմամբ: եւ եթե 60-ականների կեսին նա միջին հաշվով տարեկան խմում էր 91 լիտր գինի, ապա այժմ ընդամենը 32 լիտր: Ընդհանուր առմամբ սնունդը դարձել է ավելի հաղթահարակազմված, տարատեսակ եւ դիետիկ: երկու անգամ նվազել է հացի օգտագործումը, գրեթե երկու անգամ շատացել եւ մոտավորապես մեկ երրորդով կարտոֆիլի: Վերջապես, հակառակ լայն տարածում գտած կարծիքին, սկսած 1975 թվականից Ֆրանսիայում գաղթականների քանակը մնում են կայուն 3,6 միլիոն մարդ, կամ երկրի ամբողջ բնակչության 6,3 տոկոսը: Նրանց կեսից շատը եվրոպական ծագում ունեն: Ամենից շատ գաղթականները պորտուգալացիներ են՝ 650 հազար: ■

Լուրերի հոսք

Շախրայը Մոսկվա վերադարձավ զեկուցելու

Ռուսաստանի փոխվարչապետ Սերգեյ Շախրայը, որը հինգշաբթի օրը Մոսկվա վերադարձավ, Ռուսաստանի ղեկավարությանը զեկուցագիր կներկայացնի Հյուսիսային Օսիայի եւ Ինգուշիայի իրադրության եւ ժամանակավոր վարչակազմի ղեկավար Վիկտոր Պոլյանիչկոյի տպանության հանգամանքների մասին: Այդ մասին հայտնեցին փոխվարչապետի մամուլի ծառայությունում: Այդ հաղորդման համաձայն, Շախրայը կգրաղվի հակամարտության գոտում ծագող խնդիրների օպերատիվ լուծման կառավարական մշտական խմբի ստեղծմամբ, այդ շրջանում դաշնակցային նախարարությունների ու գերատեսչությունների աշխատանքի համակարգմամբ: Ինչպես նշում է մամուլի ծառայությունը, Շախրայի Մոսկվա վերադառնալը պայմանավորված է նաեւ այն բանով, որ նա ուրբաթ օրը պետք է մասնակցեր Ռուսաստանի կառավարության ընդլայնված նիստին եւ օգոստոսի կեսերին նախատեսված հանրապետությունների ղեկավարների խորհրդի նախապատրաստմանը: ԻԴ

Դուդաեւը շեղում է ուշադրությունը

Քաղաքացիական պատերազմի սկիզբ է հանդիսացել Չեչնիայի Վերքերեյան շրջանում նախագահ Դուդաեւի կողմնակիցների եւ ընդդիմության միջեւ մարտերն ընթանում շրջանի ղեկավար Ռամազան Ավտորխանովը: Հինգշաբթի նա հայտարարել է, որ Դուդաեւը ես չի կանգնի շրջանը ծնկի բերելու իր փորձերից: Ավտորխանովի խոսքերով, իրավիճակը մնում է լարված, եւ այդ իրավիճակում «Չեչնիայի նախագահից կարելի է սպասել ամեն ինչ»: Ավտորխանովը հաղորդել է, որ ներկայումս հրադադարի մասին պայմանագիրը, որն ստորագրվել է երեքշաբթի, ընդհանուր առմամբ պահպանվում է: Իսկ նախագահի կողմնակիցներն առայժմ չեն վերադարձել ինքնապաշտպանական ուժերի մարտիկներին: Հաճախակի ընդդիմության տվյալներով, Դուդաեւի կողմնակիցները ներկայումս ամրանում են Վերքերեյան շրջանի սահմանին, Կեսի-Յուրտ գյուղից 10 կմ հեռավորության վրա, կուսակելով հրետանի եւ զրահատեխնիկա: Չորեքշաբթի Չեչնիայի ժողովրդական վստահության կառավարության տարածած հայտարարության մեջ վարչապետ Յարագի Մամոդաեւը հայտնել է «գեներալ Դուդաեւի ջոկատների կողմից ասնձագերծված եղբայրասպան պատերազմը»: Հայտարարությունում նշվում է, որ «իրագործելով իր տերերի կամքը, գեներալ Դուդաեւը ձգտում է կռվկասում ստեղծել հակամարտության նոր գոտիներ եւ տարածքային հասարակայնության ուշադրությունը շեղել Ռուսաստանում նախապատրաստվող զինվորական հեղաշրջումից»: Չեչնիայի պատասխանական իշխանությունները չեն ճանաչել ժողովրդական վստահության կառավարությունը, որը գտնվում է Չեչնիայից դուրս: «Ազգ»

Ինգուշիան հերքում է հրոսակախմբերին առնչվող հաղորդումները

Ինգուշիայի անվտանգության նախարարությունը հերքել է Ռուսաստանի զանգվածային լրատվության միջոցների հաղորդումները հանրապետության տարածքում գործող աճուրդնական կազմավորումների մասին, ինչպես նաեւ դրանց Հյուսիսային Օսիա բռնանցելու մասին: Որոշ հաղորդումներում, մասնավորապես, չէր բացառվում այն բանի հնարավորությունը, որ ինգուշական ելուզակային կազմավորումները մասնակցած լինեն օգոստոսի 1-ին Վլադիկավկազի մոտակայքում Հյուսիսային Օսիայի եւ Ինգուշիայի արտակարգ դրության գոտու ժամանակավոր վարչակազմի ղեկավար Վիկտոր Պոլյանիչկոյի սպանությանը: Անվտանգության նախարարության հայտարարությամբ նախագծությունում է արվում, որ «զրպարտության եւ ազգանվան բնաջնջման բորբոքման համար զրպարտչական հերյուրանքների հեղինակները լիակատար պատասխանատվություն կկրեն Ռուսաստանի օրենքներին խստիվ համապատասխան»: ԻԴ

digitised by A.R.A.R.@

Լուրերի հոսք

«Ռուսական մեծ ճանապարհ» առեւտրական քարավան

Յարուպավլում աշխատելու երեք օրերին Վոլգայով Տվեր-Ստրոփսան երթուղով շարժվող «Ռուսական մեծ ճանապարհ» առեւտրական քարավանի մասնակիցները 1,5 միլիարդ ռուբլու ապրանքներ վաճառեցին եւ պայմանագրեր կնքեցին: Վաճառքի հաջող վայրերը կդառնան Նիժնի Նովգորոդը, Կազանը, Ուլյանովսկը, Սամարան, Սարատովը, Վոլգոգրադը եւ Ստրոփսանը: Քարավանի ղեկավարը՝ Տվերցի ձեռնարկատեր Արտակ Թունիեւը, հայտարարեց, որ ձեռնարկման նման սկիզբը, որին մասնակցում են Պոլոցիեի բոլոր շրջանների առեւտրականները, հիմք է տալիս խոսելու կորուսյալ տնտեսական կապերի իրական վերածնման մասին: Նրա խոսքերով, Հեղկասյանի դեպքանասան եւ Ռուսաստանի բարեփոխումներին աջակցող միջազգային հիմնադրամի ղեկավարները մտադրություններ արձանագրություն են ստորագրել 1994 թ. Տվեր-Հեղկասյան երթուղով նման առեւտրական քարավան կազմակերպելու վերաբերյալ, որը լիովին կրկնում է 500 տարի առաջ Տվերցի հայտնի վաճառական Աֆանասի Նիկիտինի անցած ուղին: Օգոստոսի 5-ին քարավանը շարժվեց դեպի Նիժնի Նովգորոդ: ԻՖ

Ռուսաստանի բանկը հերքում է նոր թղթադրամների առաքման լուրերը

Ինչպես Պրոֆակտում գործակալության թղթակցին հայտնեցին օգոստոսի 4-ին Ռուսաստանի կենտրոնական բանկի մամուլի ծառայությունում, ԱՊՀ մի շարք հանրապետություններ, մասնավորապես Հայաստան, նոր կանխիկ թղթադրամի առաքման վերաբերյալ զանգվածային լրատվության որոշ միջոցներում հայտնված հաղորդումները չեն համապատասխանում իրականությանը: Այդ հանրապետությունների հետ բանակցություններ են վարվում: Բայց առայժմ ոչ մի որոշում չի ընդունվել նրանց նոր թղթադրամներ հասկացնելու վերաբերյալ: ԼՏ

Ուկրաինայում սկսում են էլեկտրոնային դրամ մտցնել

Օգոստոսի 3-ին Ուկրաինայում սկսեցին փորձարկել միջբանկային հաշվարկների նոր համակարգ, որը կատարվում է միջազգային բանկի հաշվարկային դրամի միջոցով: Համակարգի աշխատանքը երաշխավորում է Ուկրաինայի ազգային բանկը, իսկ առեւտրային բանկերը համատեղ դրամատնտեսություն են կրում միջբանկային հաշվարկների վճարման համար: Բացի ավանդական «թղթային» ձեւով առկա փաստաթղթերից, հաշվարկների նոր համակարգում կօգտագործվեն էլեկտրոնային բանկային փաստաթղթեր, որոնք հատատված են Ուկրաինայում 1992 թ. հոկտեմբերի 2-ին ընդունված էլեկտրոնային դրամի համադրության հանձնարարությամբ: Ուկրաինայի ազգային բանկի գլխավոր հաշվապահ Վիկտոր Կուվեցի խոսքերով, էլեկտրոնային փաստաթղթերում առկա տեղեկությունները հուսալիորեն դրաշտպանված են սարքածրագրային միջոցներով: Նոր համակարգին միացել են Ուկրաինայի խոշորագույն առեւտրային բանկերը՝ «Ինկոն», «Ուկրինբանկը», «Վերածնունդը»: «Ուկրինբանկի» նախագահ Ալեքսանդր Ֆիգուրայի կարծիքով, նոր համակարգը լրիվ ինքնավարության դեպքում կարող է առաջանալ բանկային մեկ օրում բանկային փաստաթղթերի առաքումը մեկ շրջանից մյուսը, այսինքն, դա անել տասնապատիկ արագ, քան ներկայումս գործող վճարային փաստաթղթերի առաքման ձեւը: ԼՏ

Չժան Վանյանը կայցելի Ռուսաստան

Օգոստոսի 9-17-ը պաշտոնական այցով Ռուսաստան կայցելի Չինաստանի բանկի գլխավոր շտաբի պետ, գեներալ-գնդապետ Չժան Վանյանը: Նախատեսված են հանդիպումներ Ռուսաստանի զինված ուժերի գլխավոր շտաբի պետ, գեներալ-գնդապետ Միխայիլ Կոլեսնիկովի եւ պաշտպանության փոխնախարար Անդրեյ Կոկոշինի հետ: Պատվիրակությունը պետք է այցելի նաեւ Սանկտ Պետերբուրգ եւ Վոլգոգրադ: ԻՖ

Մշակույթ

Ամերիկահայ բեմադրության արշալույսները

Հեռվից հեռու լսել էինք հեռավոր Լոս Անջելեսում վերջերս հիմնված Կատակերգության թատրոնի մասին, որը որդեգրել էր գերազանցապես մեր այսօրվա կյանքն արտացոլող հայկական երկերի բեմադրման եւ գեղարվեստական հանրությանը դրանց ներկայացման ուղղությունը: Եւ ահա, մայիսի 16-ին նորաստեղծ թատրոնը Wilshire Ebell-ում բեմականացրել է երիտասարդ թատերագիր Ռուբեն Ավետիսյանի «Պարոն Կարապետի բերեզը» թատերախաղը, որն ունեցել է բացառիկ հաջողություն: Թերելով ամերիկահայ մամուլը, ակամա մասնակիցն եմ դառնում այս բեմադրության եւ լցվում ցանկությամբ՝ դրա արձագանքները ներկայացնելու հայրենի ընթերցողին:

Նախ, հարկ է տալ հիմնադիր բեմադրիչի անունը՝ Ռաֆայել Գրիգորյան: Նա իր մի քանի հավատավոր ընկերների հետ ձեռնարկեց թատրոնի ստեղծումը: Իր շուրջ հավաքեց թատերասեր եւ խանդավառ դերասան-դերասանուհիների եւ լծվեց գործի: Արդյունքն իրեն երկար սպասեցնել չտվեց: «Պարոն Կարապետի բերեզը» արժանացավ դրվատական եւ հիացական գնահատականների:

Պիեսն ամբողջությամբ առանցքված է հայրենիքը լքած եւ Լոս Անջելեսում հաստատված զանգվածների արտաքին ու ներքին դրամայի շուրջ: Տասնամյակներ տեւած եւ դեռ շարունակվող նյութական ու հոգեւոր հեղձուկը: Ամերիկայի վարդաջրված «պատրանքը», իրականում սակայն դաժան ու հոսի բարքերը, դրանցից առաջացած հուսախաբությունն ու զզջումը բեմում ծավալվող գործողության բաղկացուցիչ տարրերն են: Ակնհայտ է բախումը հայ մարդու երազների եւ ամերիկյան կարծր իրականության միջեւ: Եւ այս ողբերգական կացությունն արտահայտված է կատակերգական արտահայտաձեւերով: Ռուբեն Ավետիսյանի կյանքի կոչած տիպարները գունագեղ են, կենսական, հաճոգիչ: Նրանք առավելապար խոսում են արեւելահայերենով, բեւեռերեն հնչում է նաեւ ժողովրդային արեւմտահայերենը՝ տեղական երանգ հաղորդելով դեպքերին:

Պիեսում չէին «մոռացվել» նաեւ հայաստանյան վերջին ձմեռվա տագնապները: Եւ սրանք, եւ ողջ պիեսը հաջողությամբ է բեմադրել Ռաֆայել Գրիգորյանը, որն, ի դեպ, թատերագրի հետ մաս է կազմում դերասանախմբի: Սփյուռքահայ մամուլը համերաշխորեն ընդգծում է ամբողջ բեմադրության «խմբական հավասակական խանդավառության» արդյունք լինելու դրագան: Հատկապես շեշտվում է այն հանգամանքը, որ ներկայացման հեղինակները կարողացել են «միշտ» կատակերգություն սիրող սփյուռքահայ հանրությանը ներկայացնել յուրաքանչյուրի ողբերգությունը՝ ծիծաղի միջոցով: Ինչպես Վարդգես Սեւակն է գրում «Նոր օր» թերթում, «Ամբողջ ներկայացման ընթացքում հրջացող հանդիսատեսի աչքերում նկատվում էր արցունք, որ կարծես դառնում էր անթաքցրելի մի հարցական՝ աչքերը արցունքոտվում են ծիծաղի՞ց, թե լացից»: Ապա ավելացնում է. «Նրանք, ովքեր չկարողացան ներկա գտնվել այս ներկայացմանը, կորցրին առիթը տեսնելու իրենց այնպես, ինչպես տեսնում են առավոտյան՝ հայելու առաջ իրենց կիսարբուն դեմքը լվանալիս»:

Հետագա հաջողություններ մաղթենք նորաստեղծ հայ թատրոնին:

Լ. Լ.

ԱԶԳ - ՄԱՐԶԱԿԱՆ

ՄԻՋՓՆՋԱՅԻՆ ՄՐՑԱՇԱՐԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՊԱՐՏԻԱՆ

Շվեյցարիայի Բիլ քաղաքում օրերս ավարտվեց շախմատի տղամարդկանց աշխարհի առաջնության միջփնջային մրցաշարը, բայց արձագանքները դեռ չեն մարել: Հավակնորդների փուլ դուրս եկած 10 գրոսմայստերներին միանալու են աշխարհի նախորդ առաջնության կիսաեզրափակիչ մտած մոսկվացի գրոսմայստեր Արթուր Յուսուպովը, որը հիմա հանդես է գալիս Գերմանիայի դրոշի տակ եւ Կարպով-Թիման եզրափակիչ մրցամարտում պարտվածը:

Հունվարին սկսվելու են հավակնորդների մրցամարտերը: Արդեն կատարվել է վիճակահանությունը եւ հայտնի են դարձել զույգերը: Միմյանց հետ մրցելու են.

Ադամս-Գելֆանդ
Անանդ-Յուսուպով
Սալով-Խալիֆման
Կրամնիկ-Յուդասին
Կամսկի-Վան դեր Սբերեն
Լոյտ-Կարպով-Թիման զույգի պարտվող

Ինչպես հայտնի է, մեր հանրապետության 3 ներկայացուցիչներից Սմբատ Լոյտյանը կարող էր մտնել հավակնորդների շարքը, սակայն հավասար միավորների պարագայում բախտը ժպտաց Անանդին:

Ահա թե ինչ է պատմում Լոյտյանի մարտավարությունը, 37 նախկին չեմպիոն, սպորտի վարպետ Արմեն Համբարձումյանը, որը նոր է վերադարձել Շվեյցարիայից.

- Երեք տարի առաջ Ֆիլիպինոներում տեղի ունեցած աշխարհի առաջնության միջփնջային մրցաշարում էլ Սմբատ Լոյտյանի մարտավարությունն էր: Այն ժամանակվանից շախմատը շատ է փոխվել: Համակարգիչների շնորհիվ այն զգալի առաջընթաց է ապրել, սակայն հենց համակարգիչների շնորհիվ էլ այդ հինավուրց եւ իմաստուն խաղը կարող է կործանվել: Համակարգիչների հիշողություններում հսկայական քանակությամբ շախմատային տեղեկություններ են զետեղվում եւ ամենասեղմ ժամանակում կարելի է անհրաժեշտ ինֆորմացիա ստանալ, ընդհուպ մինչեւ այս կամ այն շախմատիստի տարբեր ժամանակներում խաղացած բոլոր պարտիաների մասին: Եւ հաճախ ստացվում է այնպես, որ ինքդ քեզ ես խաղում: Կարելի է ասել, որ բացի մեր հանրապետության ներկայացուցիչներից, միջփնջայինի գրեթե բոլոր մասնակիցները Բիլ էին եկել իրենց համակարգիչներով: Եթե հիմա տեխնիկական անհրաժեշտ զինվածության մասին չմտածենք, ապա երկու տարում բոլորից հետ կմնանք նաեւ խաղով: Պատկերացրեք, որ Լոյտյանի յուրաքանչյուր մրցակից, որպես օրենք, լավատեղյակ էր նույնիսկ երկրորդական մրցաշարերում նրա խաղացած պարտիաներին: Թե Սմբատ Լոյտյանը, թե Վլադիմիր Հակոբյանը խաղում էին իրենց կարողությունների միջին մակարդակով, բայց վերջնագծի մատույցներում Լոյտյանի երկրորդ օնչաառությունը բացվեց եւ ստեղծագործական խաղի շնորհիվ հաղթանակները հաջորդեցին իրար:

Այնպիսի տպավորություն էր, որ եթե մրցաշարը երկարատեւ լիներ, ապա նրան հնարավոր չէր լինի կանգնեցնել: Սմբատը հատկապես փայլուն խաղաց վերջին տուրում, այն էլ երբ մրցաշարային լարվածությունը հասել էր գագաթնակետին: Իսլանդացի հանրահայտ գրոսմայստեր Յոհան Խյարտարսոնի հետ խաղացած այդ պարտիան հավանաբար ամենագեղեցիկն էր մրցաշարում.

ԼՊՈՒՏՅԱՆ-ԽՅԱՐՏԱՐՍՈՆ

1. d4, ∂f6 2. c4, e6 3. ∂f3, b6 4. a3, փb7 5. ∂c3, d5 6. pc2, փe7 7. cd, ∂:d5 8. փd2, 0-0 9. e4, ∂:c3 10. փ:c3, ∂d7 11. 0-0-0, p c8 12. h4, ∂d8 13. ∂h3 ∂f8 14. d5, e:d 15. ∂g3, g6 16. h5, de 17. փc4 f, pf5 18. ∂e5, ∂:d1 19. p:d1, ∂e6 20. hg, hg 21. փ:e6, փg5+ 22. ∂:g5, p:g5 23. Ub1, fe 24. pd7, ∂f8 25. ∂g4, e5 26. փ:e5, սեւերը հանձնվեցին

Տարօրինակն այն է, որ շատերի մեջ այնպիսի տպավորություն է ստեղծվել, թե Սմբատ Լոյտյանն անհաջող է հանդես եկել մրցաշարում: Ընդհակառակը, նրա ելույթը պետք է գերազանց համարել: Ուրիշ բան է, որ վերջին պահին մարզական բախտը չբերեց: Համենայնդեպս, միջփնջային մրցաշարի մասնակիցների մեջ, որն աննախադեպ ուժեղ կազմ ուներ, Լոյտյանի անհատական գործակիցը 48-րդն էր, իսկ ինքը գրավեց 12-րդ տեղը եւ փաստորեն մտավ աշխարհի ամենաուժեղ գրոսմայստերների շարքը: Լոյտյանը միջփնջայինում 20 միավորով ավելացրեց իր անհատական գործակիցը: Եթե խոսելու լինենք հավակնորդների հնարավորությունների մասին, ապա հաշվի առնելով շախմատիստների սենսիտիվությունը, պետք է ենթադրել, որ աշխարհի հաջորդ չեմպիոնը լինելու է Վիշվանաթան Անանդը, մանավանդ, որ Կասպարովը չի լինի նրա ճանապարհին: Հարցը միայն այն չէ, որ Անանդն իրոք տաղանդավոր գրոսմայստեր է, այլ այն, որ սովորաբար բախտը ժպտում է նրան, ով վերջին պահին է մտնում մասնակիցների շարքը: Իսկ Անանդը պարզապես հրաշքով տիրեց 10-րդ ուղեգրին եւ հայտնվեց հավակնորդների թվում: Հանգամանքների բացառիկ դասավորությունը փրկեց նրան: Անանդը նաեւ խավարտիշի տուրում, այն էլ վաս դիրքում, կարելի է ասել նվեր ստացավ փորձառու Կորչնոյից, որն անսպասելիորեն ֆիգուր կորցրեց, ապա գործակիցների աննշան տարբերությամբ առաջ անցավ Եոիշինից եւ Լոյտյանից: Ինչ խոսք, անչափ երջանիկ է միայն Անանդը, այլեւ նրան ուղեկցող Հեղկասյանի մեծաքանակ պատվիրակությունը: Անանդը իրոք պատշաճ է դարձել իր հայրենիքում:

Շարունակությունը կարդացեք մեջ

Սեւակյան

Վշտի ծիծաղ քաղաքական թեմաներով

❖ - Անցյալ օրը, հեռուստացույցով մի հայ պարմանուհու էին ցուցադրում: Նա խոստովանեց, որ Երեւանի հյուրանոցներից մեկում, միանգամից սպասարկել է չորս պարսիկ գրոսաշրջիկի:
- Միանգամից չո՞ւրս:
- Այո, չորս:
- Փառք աստծո, ուրեմն հայ-պարսկական հարաբերությունները լայն թափ են ստանում:

❖ - Թերթերը գրում են, որ այսօր Հայաստանում կես միլիոնից ավելի անօթեւան մարդիկ կան:
- Երեւի դրա համար են Հայաստանը կոչում բանգարան բաց երկնքի տակ:

❖ - Էդ Մարիո Ռաֆաելլին ո՞վ է:
- Կարծեմ իտալացի երգիչ է:
- Եթե իտալացի է, ինչու իրենց գեղեցիկ մեղեդիները թողած, թուրքական մուղամներ է երգում:

❖ - Ես չեմ հասկանում, թե ինչո՞ւ են Լեռնային Ղարաբաղի հարցով զբաղվող միջազգային խորհրդակցությունները տարօրինակ անվանումներ ստանում: Երբեմ գումարած մեկ, կամ ինը գումարած մեկ: Դա ի՞նչ է նշանակում:
- Դա նշանակում է, որ Ղարաբաղը նորից գումարելու են Ադրբեջանին:

ԱՐԱ ՎԱՀՈՒՆԻ

Մտորումներ ճանապարհի երկրորդ կեսին

❖ *Երիտասարդ դիվանագետներին եւ դիվանագետ երիտասարդներին.* Մարդ պիտի կարողանա չդատապարտվել, երբ գիտի, եւ դատապարտվել, եթե չգիտի:

❖ Տվել են մարմին, դահանջվում է, որ մարմնից հրաժարվեմ: Տվել են հոգի, որպեսզի հոգի ունենամ տալու: Ընդամենն այսքանն է կյանքի տխուր կատակերգությունը:

❖ Ձայակ. Կոկնում են որ անուն, եւ դա նշանակություն ունի սրտակոտրի համար:

❖ Շմեռնելը դժվար է: Ցիրտ միայն ավելի դժվար է:

❖ Ի՞նչ անես, երբ «Բաց է» ազդարարությունը կախված է փակ կուռ երի վրա:

❖ Եթե ցիրտ ես խոսում, սառած է՝, որ շատ է: Սիրալ ես խոսում՝ նուրբ: Լռում ես՝ համարում են վախկոտ: Տրված է գնահատվելու լաբ, ընտրանք:

❖ Եթե մեծամասնությունն իրավացի լիներ, այսօր պիտի ապրեա՛ր լինեիք հարյուրների մեջ:

❖ Մեխանիկական փոխանցությամբ բազմապատկված տեղեկությունը դառնում է հանդգնություն:

❖ Դու մենակ եմ, դու մենակ չես, մենակ դու չես:

Եր. Հայաստանի Հանրապետարան
ՎԱՀՐԱՄ ԱԼԲԱՆՅԱՆ

ԱԶԳ - ՄԱՐԶԱԿԱՆ

Գալֆայանը պատրաստվում է

Ֆրանսահայ լողորդ, Միջերկրական խաղերի չեմպիոն, Ֆրանսիայի այս տարվա առաջնության 50 եւ 100 մ լողատարածությունների հաղթող Քրիստոֆ Գալֆայանը իր ընկերոջ՝ հայտնի լողորդ, 200 մ մրցատարածության եվրոպայի չեմպիոն Ֆրանկ Էսպոզիտոյի հետ ամեն օր 4 ժամ մարզվելով նախապատրաստվում է Եվրոպայի առաջի կա առաջնությանը, որը տեղի է ունենալու Անգլիայի Շեֆիլդ քաղաքում:

Գալֆայանը 26 տարեկան է: Նրա հասակն է 176 սմ: Հայ տաղանդավոր լողորդն անցյալ տարի Բարսելոնայի օլիմպիադայում 4-ր տեղն է գրաւել 50 մ լողատարածությունում: Նա երկար տարիներ ֆրանսիացի հանրահայտ լողորդ Ստեֆան Գարոնի սպվերում էր, բայց ըստ Ֆրանկ Էսպոզիտոյի, Գալֆայանն այսօր Ֆրանսիայի ամենաարագ լողորդն է:

Հակառակ այն բանի, որ Ֆրանսիայի շատ չեմպիոններ միլիոններ են վաստակում, լողորդներն անհամեմատ փոքր եկամուտներ են ունենում: Բացառություն չէ նաեւ Քրիստոֆ Գալֆայանը, որը յուրաքանչյուր մրցաշարում շահում է ընդհամենը 10 հազար ֆրանկ: Բայց Քրիստոֆ Գալֆայանի համար, որը ֆրանսիական լողի ամենամեծ հույսն է, 1996 թ. Ատլանտայում (ԱՄՆ) կայանալիք օլիմպիական խաղերում չեմպիոնի ոսկե մեդալն անհամեմատ բանկ է շահից:

ԳՐԻԳՈՐ ԱՄԻՐՋԱՆՅԱՆ
Վազանս, Ֆրանսիա

Մարդասիրական ... Հանրապետարանի ... ՎԱՀՐԱՄ ԱԼԲԱՆՅԱՆ

digitised by A.R.A.R.@

Industrial trade centre

Երեւանյան գրասենյակն առաջարկում է գործարար մարդկանց բացի Marlboro-ից մենթոլական ամեն տեսակի արտասահմանյան ծխախոտ:
Հանձնումը Ռուսաստանում:

Մեր հասցեն.
Երեւան, «ԱՆԻ» հյուրանոց, 301,303 սենյակ,
Հեռախոսներ՝ 56.43.97, 59.43.01, 59.01.03

Գրասենյակը աշխատում է ժամը 10:00–18:00:

PUBLISET

NORINVEST

ՆՈՐ ՆԱԽՆԱԳԾԵՐ

Դուք ունեք դրամ, որը օգտագործելու եք վա՞ղը

Դրա՞մ եք կուտակում խոշոր գնում կատարելու համար, կամ պատրաստվո՞ւմ եք աշխատավարձի մի մասը ծախսել ամսվա վերջին:
Ներդրեք այդ գումարը
ՆՈՐԻՆՎԵՍՏ
ինվեստիցիոն ֆինանսային ընկերությունում,
եւ ամեն նոր օրը
Ձեզ կբերի որոշակի եկամուտ:
ՆՈՐԻՆՎԵՍՏԸ
պատրաստ է ընդունել նոամսյա ավանդներ, տալով ցանկացած օր ետ ստանալու հնարավորություն:
Այցելեք մեզ
Երեւան, Աբովյան 14 հասցեով
(նախկին «Երեւան» հյուրանոց),
2-րդ հարկ, 100 սենյակ
եւ մենք Ձեզ սիրով կծանոթացնենք մեր նոր նախագծի մանրամասնություններին:
Հեռ. 56.19.31:

Հայտարարություն

ՀՀ մամուլի տարածման գործակալությունը հայտնում է, որ սույն թվականի սեպտեմբերի 1-ից սկսվում է 1994 թ. առաջին կիսամյակի թերթերի ու ամսագրերի բաժանորդագրությունը:

Բաժանորդագրությունը կարելի է յուրաքանչյուր.

1. Անհատ բաժանորդների համար՝ Երեւան քաղաքի փոստային բաժանմունքներում:

2. Հիմնարկ-ձեռնարկությունների համար (փոխանցումով կամ կանխիկ)՝ 10-րդ փոստային բաժանմունքում (Երեւան, Հանրապետության հրապարակ)

3. Հանրապետության այլ շրջաններում՝ միջշրջանային գործակալություններում եւ փոստային բաժանմունքներում:

4. Այն հիմնարկ-ձեռնարկությունները, որոնք կցանկանան իրենց բաժանորդագրված թերթերը ստանալ փաթեթավորված, ձեռնարկությանը մոտ գտնվող թերթերի եւ ամսագրերի կրպակից, անդորրագրում նշեն կրպակի համարը:

5. Հանրապետության թերթերի եւ ամսագրերի, ինչպես նաեւ Ռուսաստանի Դաշնության շաբաթաթերթերի եւ ամսագրերի բաժանորդագրության վերջին ժամկետը հոկտեմբերի 31-ն է:

ՄԱՄՈՒԼԻ ՏԱՐԱԾՄԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ

«Հայկական ծրագրեր» ընկերությունն առաջարկում է լավագույն հաշվապահական ծրագրերը ԱՊՀ երկրներում:

Հեռախոսներ
252463,
254758,
584545

տեղեկատու

Ինվեստ. լիարժեք արագ տեղեկատվություն

հեռախոս
589 167

Երեւան
Վաճառողի Արմայի 2/8

NICA
INVESTMENT COMPANY

ՆԻԿԱ ինվեստիցիոն ընկերությունը հրավիրում է մինչեւ հուլիսի 24-ը ներդրումներ կատարած իր ավանդատուներին ձեռք բերել մբերքներ.

բաբարավազ – 600 ռուբլի
բրինձ – 300 ռուբլի:

Մբերքների վաճառքը կկատարվի ֆիրմայի գրասենյակում օգոստոսի 7–8-ը:

Սայաթ-Նովա, 7 (Օպերայի դիմաց) Հեռ. 56-79-46

PUBLISET

ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԵՎ ՆԵՐՔԻՆ ՏՈՒՐԻԶՄԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Արտասահմանյան եւ ներքին տուրիզմի վարչությունը հրավիրում է

բոլոր ցանկացողներին հաճելի ճանապարհորդության

ԵՐԵՎԱՆ–ՊԼՈՎԴԻՎ–ԵՐԵՎԱՆ

ուղիղ չվերթով օգոստոսի 13-ին, 27-ին եւ յուրաքանչյուր 14 օր մեկ:

Գները մատչելի են:

Ձեզ սպասում է ոչ միայն հանգիստ, այլեւ կարող եք գնումներ կատարել Պլովդիվի առաջնակարգ խանութներից:

Ցանկացողները կարող են դիմել «Էրեբունի» հյուրանոց, 3-րդ հարկ, սենյակներ 22, 27, 28

Հեռախոսներ՝ 56-06-35, 58-06-69, 58-76-26

PUBLISET

Shark Co. LTD

"SHARK" ֆիրմա

Որոշ հանգամանքների պատճառով «ՇԱՐԿ» ֆիրման ժամանակավորապես դադարեցնում է գումարների ներմուծում: Նախկինում կնքված պայմանագրերը մնում են ուժի մեջ:

Լրացուցիչ տեղեկությունների համար Դուք կարող եք դիմել հետեւյալ հասցեով

«ԱՆԻ» հյուրանոց, 8-րդ հարկ, 824 սենյակ, հեռ. 594464

PUBLISET

Լուրեր Հայաստանից

1,678 միլիոն դոլլար «Ռոսիյսկայա գազետային»

Ռուսաստանի խորհրդարանի զանգվածային լրատվության միջոցների կոմիտեն ողջունեց Գերագույն խորհրդի «Ռոսիյսկայա գազետա» թերթի խմբագրության առաջարկությունը արտասահմանում սեփական թղթակցական ցանց ստեղծելու մասին: Պատգամավորների ինքնակամանը ներկայացված բացատրագրում առաջարկվում է ստեղծել թղթակցական 10 կետ, այդ թվում ԱՄՆ-ում, Ֆրանսիայում, Գերմանիայում, Չինաստանում, Ճապոնիայում եւ այլ երկրներում, այդ նպատակին հատկացնելով 1,678 միլիոն ամերիկյան դոլլար: Թերթի եւ խորհրդարանական կոմիտեի կարծիքով, թղթակցական ցանցի ստեղծումը «կարեւոր դայման կդառնա աշխարհի իրադարձությունների մասին Ռուսաստանի բնակչությանը լիակատար եւ անաչառ տեղեկություններ հաղորդելու համար»: ԻՏ

Բաբուրինը հայց ներկայացրեց Կալուգինին եւ «Իզվեստիային»

Ռուսաստանի ժողդատգամավոր Սերգեյ Բաբուրինը դատարանին հայցադիմում է ներկայացրել ՊԱԿ-ի նախկին գլխավոր Օլեգ Կալուգինի եւ «Իզվեստիա» թերթի դեմ: Ինչպես դատգամավորը հայտնեց ԻՏ-ին, դատարանին դիմելու եւ բարոյական վնասի փոխհատուցում դահանջելու դատճառը եղել է Կալուգինի հայտնած եւ «Իզվեստիայի» հրդարակած այն տեղեկությունը, թե Սերգեյ Բաբուրինը գործակցել է ԽՍՀՄ դետանվտանգության կոմիտեի հետ: Հայցի գումարը կազմում է 10 միլիոն ռուբլի: Բաբուրինն ասաց, թե Մոսկվայի Կունցեւոյի շրջանի ժողդատարանն արդեն հավատել է այդ գործը քննելու իր մտադրությունը: Ունկնդրումներն սկսվելու են մոտ ժամանակներս: ԻՏ

Նիյազովը չի մասնակցի Մոսկվայի գագաթաժողովին

Թուրքմենստանի նախագահ Սաֆարմուրատ Նիյազովը չի մասնակցի Տաջիկստանի իրադրության կարգավորման նպատակով միջինասիական դետությունների եւ Ռուսաստանի ղեկավարների օգոստոսի 7-ին Մոսկվայում նախատեսված հանդիպմանը: Ինչպես ԻՏ-ին հայտնեցին նախագահի մամուլի ծառայությունում, այդ հանդիպմանը որդես դիտորդ ներկա կլինի Մոսկվայում գտնվող Թուրքմենստանի փոխվարչապետ Բորիս Շիխմուրադովը: Նախագահի մամուլի ծառայությունում ընդունված որոշումը բացատրեցին այն բանով, որ «հանրապետությունը հավատարիմ է մնում ուրիշ դետության ներքին գործերին չմիջամտելու դիրքորոշմանը»: ԻՏ

Ուղղաթիռի վթար

Օկտյաբրսկ քաղաքում վայրէջք կատարելիս օգոստոսի 4-ին վթարի է ենթարկվել Մի-8 ուղղաթիռը, որը դատկանում էր Մոլդովայի ավիաընկերությանը: Ինչպես հաղորդել են արտակարգ իրավիճակների դետական կոմիտեից, դատճառը 2 շարժիչների շարից դուրս գալն էր: Զոհեր չկան: Վարվում է հետաքննություն:

Դիմնադիր եւ հրատարակիչ «Ազգ» թերթի խմբագիր խորհուրդ
Գլխավոր խմբագիր ՅԱԿՈԲ ԱՎԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Խմբագիր ՅԱՍԵՆ ԳԱՍՊԱՐԵԱՆ / 581841
Տնօրեն ՍԱՐԳԻՍ ՍԱՐԳՍՅԱՆ / 562863
Apple® Macintosh® համակարգչային ծառայություն «Ազգ» թերթի
Azg armenian daily
Editor H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st., Yerevan, Armenia, 375010
Թերթի ձեւավորումն եւ տարադրությունները հեղինակ ՊԱՎԵԼ ԴԱՆԵԼՅԱՆ

Հասցե՝ Հանրապետության փողոց, «Պատանեաց» հրատ. տարան, Երեւան-23 Արգիշտիսաց 2 Գրանցման թիվ 65 Դասակ 69149 Տպաքանակ 30 000 Պատվեր 1568 Ստորագրված է տպագրության՝ 6. 8. 1993

digitised by A.R.A.R.@